1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ
43-ՐԴ ՏԱՐԻ

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Ամերիկայի բաժանորդները պէտք վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով: Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.:

ՊՐԷՄԻԱ. «Մշակի» տարեկան բաժանորդները, որոնք 1914 թ. ընթացքում լրիւ վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետևեալ գրքերից մէկը. «Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.», Վրէժնի «Մանրանկարները»: Վերջին գիրքը կը տրվի նրանց, որոնք բաժանորդագրվել են մինչև 1913 թ. դեկտեմբերի 25-ը: Մնացած բաժանորդները կը ստանան առաջին գիրքը:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“. Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ

Այսօր, չորեքշաբթի, փետրվարի 5-ին, երեկոյեան ժամը 8-ին տեղի կունենայ

Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ դասախօսութիւնը

«Հայ-վրացական անտագօնիզմի տնտեսական հիմքերը և սօցիալական բնոյթը» թեմայով:

Տոմսակների գները 1 ր. մինչև 20 կ., ստանալ Ընկ. գանձարանում.

տռ. 89. 2—2

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԸ յայտարարում է, որ էջմիածնապատկան «ՏԱՑԼԱՐ» հողերը, տարածութեամբ 600 ԴԵՍԵԱՏԻՆ, որ գտնվում է Կարսի շրջանում, տրվում են կապալով՝ ԻՆՆ տարով: Աճուրդը սկսվում է տարեկան 1700 րուբլուց: Աճուրդը կայանալու է Սինօդում մարտի 5-ին, ԱՌԱՆՑ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ: Գրաւական պէտք է ներկայացնել 600 րուբլի:

տռ. 94. 3—1

ՍԱԼԱՀ ԲԱԲԱԵՎԻՉ ՀԻՒՍԷՅՆՈՎԻ
ԷԿՍՊԵԴԻՑԻՕՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԵՒԼԱԽՈՒՄ
յայտնում է յարգելի հասարակութեան և իր կլիէնտներին, որ փետրվարի 15-ից 1914 թ. **բացում է իր բաժանմունքը** **ՂԱԹԱՐԻ ՀԱՆՔԵՐՈՒՄ**, Զանգեզուրի գաւառում: Բոլոր յանձնարարութիւնները կը կատարվեն ճշգրիտ և շուտափոյթ.

տռ. (օ. մ.) 92. 5—1

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են

հետևեալ վիպական երկերը.
1) ՋՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիօնի, Թարգմ. Հ. Առաքելեանի . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօյի, Թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱՍԻՐԿ, Ե. Սպիրէի, Թարգ. Իս. Ցարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Ց. Սօլովեանի . . . . — 40 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերստիր վճառով, պահանջողներին կը լինի միմիայն 15%:

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(5) 10—4

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՐԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օրը 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская 23, тел. 7—92.
(ա.օ.) տռ. 977 100—70

Բ Ժ Ի Շ Կ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների:
Սրսկումն «606»-ի և «914»-ի:
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզաւէտինսկայա փ. № 39. տ. Չաղէթեանի:
(չ.ու.կ.) տռ. 901. 100—39

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

III

Անցեալ անգամ մենք ասացինք, որ եթէ հայ մամուլը և հայ ինտելիգենցիան հնարաւորութիւն ունենային որևէ կերպով ազդել հայ կապիտալիստների և մանաւանդ Մանթաշեանների վրա, որոնք Գօրիի մօտ կալուած են գնել և առիթ տուել վրացի հայրենասէրներին յուզվել, մենք նրանց կը յորդորէինք թողնել Վրաստանը, իրանց կապիտալները գործ դնել Երևանի և Գանձակի նահանգներում:

Սակայն կապիտալը երբէք չէ հետևել մարդասիրական կամ քարոզչական ձգտումներին և միշտ գնացել է Մոլոխի գծած շաւղով:

Մանաւանդ այսօր, երբ Մանթաշեանի գնած կալուածում պատահել է մի դէպք և փասվել են մի քանի բանւորներ ու վրացի հայրենասէրները մի նոր աղմուկ են բարձրացնում գրելով յօդուած «Մանթաշեվի զոհերը» վերնագրով, մենք ուղղակի կոչ ենք անում —թէև անլսելի մնալու ռիսկով—Մանթաշեաններին և ասում. ի սէր Աստուծոյ, թողէք ձեր ձեռնարկութիւնները և առիթ մի տուէք վրացի հայրենասէրներին աղմուկներ բարձրացնելու:

Անցնենք երրորդ մեղադրանքին: Ծրագրված է Թիֆլիսի նահանգի երկու գաւառները՝ Բորչալուի և Ախալքալաքի՝ միացնել Երևանի նահանգի հետ: Վրաց թերթերը պնդում են, որ այդ ծրագիրը հայերից է բղխել և կառավարութիւնն առ ընդ առաջ է գնացել հայերի ցանկութեան: Մենք չը գիտենք, որքան ճիշդ է այդ, որովհետև ընդունելով նոյն իսկ, որ ծրագիր կազմողը հայ աստիճանաւոր լինի, մենք համոզված ենք, որ կառավարութիւնը, եթէ ընդունել է կամ ընդունելու է այդ ծրագիրը, նա, անշուշտ, ունի իր որոշ դիտումները, և ոչ ձգտումը՝ դուր գալ հայերին: Այդ ծրագիրը կառավարութեան անհրաժեշտ է որևէ նպատակի համար. կամ ապագայում զեմստվային հաստատութիւնների ներմուծումը անհրաժեշտ է կացուցանում այդպիսի մի ծրագիր, կամ կայ վարչական յարմարութեան որևէ պատճառ, հետևաբար, հայերը այդտեղ առաջին դերը չեն կատարում: Գալով մեզ, մենք հարցը այսպէս կը դնէինք. պէտք է իմանալ Բորչալուի և Ախալքալաքի գաւառների ընդհանուր ազգաբնակութեան ցանկութիւնը: Եթէ վարչական այդ նոր բաժանումը շահաւէտ է ազգաբնակութեան համար, ինչ ասել կուզի, որ պէտք է իրագործել այդ ծրագիրը, իսկ եթէ ազգաբնակութեան շահերը՝ տնտեսական, բարոյական, կուլտուրական պէտք է տուժեն, այդ ծրագիրը չը պէտք է իրագործել:

Սա է ամենաարդար և նպատակայարմար եղանակը խնդրի լուծման:

Ոչ մի ազգայնական նկատումն, շահ չը պէտք է գերադասել ազգաբնակութեան ընդհանուր շահերին:

Ի վերջոյ մենք կարծում ենք, որ հնարաւոր է վերացնել, կամ գոնէ լուսաբանել թիւրիմացութիւնները և տարաձայնութիւնները հայերի և վրացիների միջև, հաստատելով մի յանձնաժողով, բաղկացած երկու ազգութիւնների ներկայացուցիչներից և որի նախագահը կը լինի մի չէզոք ազգութեան պատկանող անձն, ընտրված երկու կողմերի համաձայնութեամբ: Այդ յանձնաժողովը թիւրիմացութեան ամեն մի դէպքում կամ որևէ տեղի ունեցած դէպքի առիթով կը գումարվի, կը քննի խնդիրը և կը տայ իր արդարադատ որոշումը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 փետրվարի

Պետերբուրգ.—Արդարադատութեան մինիստրի օգնական Վերեօվկինի նախագահութեամբ կազմվել է միջվարչական խորհրդակցութիւն, Կովկասի դատարանական մասը կարգաւորելու հարցը մշակելու համար:

Ֆինանսների մինիստրի օգնականներ Նովիցկին, Վիբերը և Պոկրովսկին նշանակվել են Պետական Խորհրդի անդամներ:

Վարշավա.—Թագաւոր Կայսրի կարգադրութեամբ Սկալօնի դագաղին դրվեց թարմ ծաղիկներից կազմած խաչ: Հանգուցեալի այրին հեռագիրներ է ստացել Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայից և ուրիշ բարձրաստիճան անձերից: Դագաղին դրված են բազմաթիւ պսակներ. անընդհատ հոգեհանգիստներ են կատարում ուղղափառ, կաթոլիկ և բողոքական հոգևորականութիւնները: Վաղը հանգուցեալի աճիւնը կը տարվի Պետերբուրգ, այնտեղ թաղելու համար:

Լօնդօն.—Կանանց իրաւահաւասարութեան կողմնակից մարդկանց կազմակերպութիւնը միտինգ ունեցաւ, որը մեծ ամբոխ էր հաւաքել: Շոտլանդացի ճառախօսները յայտնեցին, որ Շոտլանդիան համաձայն է կանանց իրաւահաւասարութիւն տալու: Ընդունված է այն վճիռը, որով առաջարկվում է կառավարութեան՝ կանանց ընտրական հաւասար իրաւունք տալ:

Ստօկհօլմ.—Նոր մինիստրութեան ցուցակը կը յայտարարվի վաղը: Լրագիրների ասելով, Համերշէլդը կը լինի մինիստրների նախագահ և զինւորական մինիստր, սենատոր Կնուտ-Վալենբերգ, որ բանկիր է, կը լինի արտաքին գործերի մինիստր: Համերշէլդի մինիստրութիւնը լինելու է ժամանակաւոր: Նրա գլխաւոր գործը պիտի լինի պետութեան հովանաւորութեան հարցը վճռելը: Մինիստրութեան միւս անդամները քաղաքական որոշ գոյն չունեն:

Վիեննա. — Բերխտոլդը արժանացել է Ստեֆանի մեծ խաչ-շքանշանին:

—

Ղազվինից (Պարսկաստան) մեզ գրում են յունվարի 27-ից. «Երէկ գիշեր սրտի պայթիւնից վախճանվեց տեղիս ռուսական զօրքերի ընդհանուր հրամանատար գնդապետ Սաֆօնօվը, որը յայտնի էր թէև խիստ, բայց բարի և կարգապահ մի անձնաւորութիւն: Հանգուցեալը ջերմ կողմնակից էր Թիւրքիայի հայկական բարենորոգումներին»:

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

3 փետրվարի

Աթէնք.—Թագաւորի նախագահութեամբ կայացաւ մինիստրների խորհրդի նիստը: Վենիզէլոսը յայտնեց իր տպաւորութիւնները: Խորհուրդը քննում էր նաւատորմը շտապ ուժեղացնելու հարցը: Վենիզէլոսը գտնում է, որ Եպիրոսի սահմանները մի քանի բարեկարգումներ ունենան: Յունաստանի, Ռումինիայի և Սերբիայի համաձայնութիւնը ապահովում է status quo-ն Բալկաններում և արգելք է հանդիսանում թիւրք-յունական բարդութիւններին:

Լօնդօն.—Պրինց Վիդը գալու է Լօնդօն Թագաւորին ներկայանալու համար և պէտք է խորհրդակցի Գրէյի հետ:

Բէռլին.—Պրինց Վիդը ալբանական պատգամաւորութեանը կընդունի Նէյվիդում, փետրվարի 6-ին: Պատգամաւորութիւնը չէ գալիս, որպէս զի գահն առաջարկի նրան, այլ ներկայանալու իր ապագայ իշխանին:

Բէլգրադ.—Կոկօվցեվի հրաժարականի առիթով «Правда» թերթը գրում է. «Բալկանեան անցքերը մեծ նշանակութիւն ունեն ռուս կառավարութեան պատմութեան մէջ: Երբ ստեղծվեց բալկանեան դաշնակցութիւնը, Կոկօվցեվը ռուս կառավարութեան գլուխ էր կանգնած: Հէնց դրա համար էլ Կոկօվցեվի անունը պէտք է յիշվի պատմութեան մէջ: Կոկօվցեվն ու Սազօնօվն էին գլուխ կանգնած ռուս կառավարութեան, երբ սկսվեց Սերբիայի ազատագրման պատերազմը, և նրանք էին, որ Սերբիային եղբայրական օգնութիւն ցոյց տուին»: Ողջունելով Գօրեմըկինի նշանակումը, թերթը ասում է. «Յոյս ունենք, որ մինիստրների խորհրդի նոր նախագահը կը շարունակի Կոկօվցեվի քաղաքականութիւնը Սերբիայի վերաբերմամբ»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Առաջնորդող յօդուած «Рус. Сл.» թերթի)

—

Երկար ամիսների յոգնեցուցիչ բանակցութիւններից յետոյ, Ռուսաստանի և Թիւրքիայի միջև համաձայնութիւն կայացաւ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու մասին: Մնացեալ մեծ պետութիւնների կողմից, որոնց պէտք է յայտնվի բարենորոգումների ծրագիրը, դժուար թէ որևէ առարկութիւն լինի: Այդ պատճառով մօտ ապագայում Բ. Դուռը, հաւանօրէն, կը դիմի ծրագրում մատնանշված բարեկարգումների իրագործման: Բայց ամենից նշանակալիցն այն է, թէ հայերը և քիւրդերը ինչ վերաբերմունք ցոյց կը տան դէպի այդ նոր կարգերը, և թէ որքան կաջողվի եւրօպացի ընդհանուր վերատեսուչներին երկու ազգութիւնների միմեանց հետ հաշտեցնելու հարցը վճռել, որոնք այժմ իրար դէմ լցված են գրեթէ մահաբեր թշնամանքով:

Բարենորոգումների նոր ծրագիրը Հայաստանին իսկական աւտոնոմիա չէ տալիս: Ամենից առաջ, հայաբնակ վիլայէթները չեն կազմելու մի ընդհանուր նահանգ, և Հայաստանը առաջվան պէս մնում է աշխարհագրական տերմին, անուն: Հայկական 7 վիլայէթները առաջվայ նման ունենալու են առանձին վարչութիւն և առանձին տնտեսութիւն: Միակ կապը առանձին վիլայէթների միջև, որ ցոյց է տալիս ծրագիրը, լինելու են ընդհանուր վերատեսուչները, մէկը Արևմտեան Հայաստանում (Սըվազ, Տրապիզօն և Էրզրում վիլայէթներ), միւսը հարաւ-արևելեան (Վան, Բիթլիս, Դիարբեքիր և Խարբերդ վիլ.): Այդ ընդհանուր վերատեսուչները կարող են առանձին վիլայէթների վարչութեան գործերը միացնել իրար և իրանց ենթակայ տեղական ադմինիստրացիայի գործունէութիւնը ուղղել մի ընդհանուր նպատակի: Ընդհանուր վերատեսուչները ընտրվելու են մեծ պետութիւնների կողմից չէզոք պետութեան հպատակներից, որոնց նշանակելու է Բ. Դուռը և որոնք իրաւունք ունեն անմիջական զեկուցումներ անելու սուլթանին: Ըստ երևոյթին, այդ վերատեսուչները վայելելու են մեծ անկախութիւն և չը պէտք է ուղղակի կախում ունենան Կ. Պոլսի ներքին գործերի մինիստրութիւնից: Ցաւենայն դէպս, հայկական բարենորոգումների ծրագրում ընդհանուր վերատեսուչների և թիւրք կառավարութեան յարաբերութիւնների հարցը բաց է թողնվում: Յայտնի չէ, Բ. Դուռը իրաւունք պիտի ունենա՞յ հեռացնելու անընդունակ վերատեսուչներին, նրանց ուրիշով փոխարինելու, կամ նրանց նշանակման, և դրա համար պահանջվում է մեծ պետութիւնների համաձայնութիւնը: Մինչդեռ հարցի դժուարութիւնը կայանում է նրանում, թէ ընդհանուր վերատեսուչները լինելու են արդեօք թիւրք պաշտօնեաներ՝ հրաւիրված պետութիւնների պարտադիր երաշխաւորութեամբ, թէ՞ նրանք պէտք է ներկայացնեն իրանցից Եւրօպայի աչքը, կամ միջազգային մի կօնտրօլ Հայաստանի բարենորոգումների վերաբերմամբ: Եթէ Բ. Դրանը աջողվի իր ազդեցութեան դնելու և այդ վերատեսուչներին օսմանեան պաշտօնեաներ դարձնելու, այն ժամանակ ամենալաւ բարենորոգումները կարող են առ ոչինչ համարվել:

Թէ որքան լայն են ընդհանուր վերատեսուչների լիազօրութիւնները, կը պարզվի յետագայում՝ Կ. Պօլսում կայանալիք մեծ պետութիւնների դեսպանների առանձին խորհրդակցութեան ժամանակ: Ընդհանուր վերատեսուչների փաստական վերահսկողութիւնը կայանալու է նրանում, որ նրանք իրաւունք ունեն նշանակելու և հեռացնելու տեղական պաշտօնեաներին, բացի նահանգապետներից, որոնք, առաջվայ պէս, անմիջապէս կախում պիտի ունենան Թիւրք կառավարութիւնից: Այդ իրաւունքը, ի հարկէ, շատ գնահատելի է, եթէ միայն կանօնաւորվեն յարաբերութիւնները դէպի տեղական ադմինիստրացիան նահանգապետների կողմից, որ կախում չունեն ընդհանուր վերատեսուչներից: Եթէ ոչ՝ հայկական վիլայէթների պաշտօնեաները ստիպված պիտի լինեն միաժամանակ երկու տիրոջ ծառայել: Ինչ վերաբերում է տեղական օրէնսդրութեան վրա փաստօրէն վերահսկելուն, ըստ երևոյթին, պէտք է լինի ընդհանուր խորհուրդների որոշումների քննութիւնը, որոնք հաստատվում են նահանգապետների կողմից: Վերջապէս, թէ ինչ ձևով կարող է արտայայտվել ընդհ. վերատեսուչների վերահսկողութիւնը տեղական դատարանների գործունէութեան վերաբերմամբ, յայտնի չէ միանգամայն: Ի՞նչ նշանակութիւն [illegible] վերատեսուչների [illegible] հայերի և քիւրդերի միջև ծագած հողային տարաձայնութիւնների [illegible] դժուար է [illegible]

[illegible]

Անհնար է [illegible] Թիւրքերը [illegible] ընդհանուր վերատեսուչներին [illegible] Ռուսաստանի [illegible] ցութիւն կայ:

Հայաստանի բարենորոգումների [illegible] ծրագրի [illegible] ներկայացնում է [illegible] թեան [illegible]

Հայկական [illegible] վիլայէթների ընդհանուր խորհուրդները [illegible] պիտի [illegible] թէ մեծ [illegible] ջինը՝ [illegible] նելու [illegible] հանգամանք [illegible] որոշում [illegible] են կամ [illegible] Նշանակալից է [illegible] ընդհանուր [illegible] դիր ճիշդ [illegible] չորս անդամ [illegible] գրի [illegible] խորհուրդների [illegible] 40-[illegible] շրջանի ժամանակամիջոցում, կազմում են նախապատրաստական յանձնաժողովներ միայն։

Ընդհանուր խորհուրդների կողմից վճռված և կեանքում մտցվելիք միջոցները, ինչպէս նաև յատկացված գումարների ծախսումը գտնվելու է թիւրք պաշտօնեաների ձեռքում։ Այդ պաշտօնեաներին բացատրութիւններ հրաւիրելու մասին խորհուրդների ունեցած իրաւունքը հեշտութեամբ կարելի է հասարակ ֆիկցիա դարձնել։ Վերջապէս, հայերը չորս ընդհանուր խորհուրդներում կազմելու են փոքրամասնութիւն։ Երեք խորհուրդներում (դրանցից Էրզրումինը մինչև նոր ցուցակագրութիւնը) հայերը կազմելու են ճիշդ կէսը, բայց նախագահ-նահանգապետի ձայնը այստեղ էլ, հարկաւոր դէպքում, գերակշռութիւն կը տայ մուսուլմաններին։

Թուցէ հայ ազգի համար ամենից նշանակալիցը կուլտուրական աւտօնոմիան հանդիսանար, որով, յամենայն դէպս, թիւրքական քրիստոնեաների մեծամասնութիւնը իրապէս օգտվել է մինչև երիտասարդ թիւրքերի յեղափոխութիւնը։ Հայկական դպրոցների իրաւունքի ապահովացումը և հայկական լեզուի թոյլատրութիւնը ընդհանուր խորհուրդների գործավարութեան մէջ, դատարաններում և, հաւանօրէն, վարչական ինստանցիաներում՝ խոշոր քայլ է ներկայացնում դէպի առաջ, ներկայ անիշխանական դրութեան հետ համեմատած։ Այնուհետև, կարևոր հանգամանք է ներկայացնում աննախադէպ քիւրդական հեծեալ զօրքի զինաթափումը, եթէ միայն այդ բարենպատակ միջոցը թղթի վրա չը մնայ։ Վերջում, ռուսական դիպլոմատիայի նոր յաղթանակի արժէքը կորոշվի նրանով, երբ այդ ամենը գործ դառնայ և ոչ թէ Կ. Պոլսում ստորագրված մնայ։ Ամեն ինչ դեռ առջևներս է։

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Էրզրում, 27 յունվարի

Գրել էի հայ առևտրի դէմ յարուցված բոյկոտի մասին և ասել էի, որ միևնոյն է չի աջողվի. իրականութեան պայմանների դասաւորութիւնը այդ էր ասում մեզ, այդ եզրակացութեան էլ մենք եկանք։ Եւ իսկապէս՝ բոյկոտը չաջողվեց։ Թիւրք շովինիստները, տեսնելով որ անկարող են հայ առևտրի դէմ ընդհանրապէս գաղտնի յայտարարված բոյկոտը իրագործել, այժմ էլ այդ բոյկոտը մասնաւորեցրին, բոյկոտը ռուսահպատակ վաճառականների դէմ ուղղեցին։ «Ինչո՞ւ պէտք է Օ. Դաւիդովից, «Լոյս» ընկերութիւնից և նմաններից առևտուր անել, նաւթ գնել, քանի որ նրանք ցայսօր շահագործում էին մեզ, մենաշնորհի պէս բան դարձնելով ամեն առևտուրը իրանց ձեռքում. մեզ այդ շահագործումից ազատողը մեր թիւրք-իսլամն էր՝ Թէֆիկբէյն էր. գնացէք և նրանից գնեցէք, օգուտը տուէք այդ մարդուն, որ այդպիսի հայրենասիրական գործ է կատարում և ոչ մի կոպէկ չէ շահում (?!) և այնքան դրամագլուխ է պառկեցնում ժողովրդին լոկ օգտակար լինելու համար» եայլն եայլն։ Այս է ասում այժմ Իթթիհադի՝ թիւրք հայրենասէրների գաղտնի թռուցիկը, և նրանք կարծում են, թէ մրցման կարելի է նման կոչերով ազդել։

Քուրմ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՇՔ

Յունվարի 30-ին Թիֆլիսի քաղ. դումայում քաղ. վարչութիւնը վերջապէս զեկուցեց քաղ. վարչութեան ծառայողների թոշակների յաւելման խնդիրը։ Այդ հարցը 1905 թ. ընդունվել էր, բայց մինչև այսօր մնացել էր անկատար, ինչպէս անկատար մնացին այդ թւականից արծարծված շատ ու շատ խնդիրներ ամբողջ Ռուսաստանում, և յոյս էլ չը կայ, ինչպէս նշանները ցոյց են տալիս, որ մօտ ապագայում վերոյիշեալ խնդիրները ստանան իրանց լուծումը։

1905 թ. քաղ. ծառայողները, երբ ամբողջ Ռուսաստանում մեղրամիս էին տօնում, իրանց հերթին պահանջ դրին քաղ. վարչութեան առաջ, որ հինգ տարէնը մէկ գոնէ 10%-ով ռոճիկներն աւելացնեն։

Պահանջն արդարացի էր։

Պետական ծառայութեան մէջ իւրաքանչիւր պաշտօնեայ ծառայելով ի նկատի ունի, որ վերջը շատ թէ քիչ ծերութիւնը պիտի ապահովվի կենսաթոշակով. բայց քաղ. ծառայութեան մէջ ոչ միայն ծերութիւնը չէ ապահովվում, այլ միևնոյն տեղում 10, 20, 30 տարի ծառայելով նոյն թոշակն է ստանում, իսկ անպէտքացած դէպքում դուրս շպրտվում որպէս մի անպէտք լաթ, կամ շատ-շատ մի հոգու 100 րուբլի միանուագ նպաստ տրվում։ Ի հարկէ կան և կենսաթոշակ ստացողներ. բայց նրանք այն բաղդաւորների շարքին են պատկանում, որոնք ունեն քաղ. դումայում և քաղ. վարչութեան մէջ քաջ խնամիներ։ Եթէ քաղ. վարչութեան արխիվը քննելու լինէք, դուք պերճախօս ապացոյցներ կը գտնէք ասածներիս։

Այդպէս ուրեմն հասարակ մահկանացուները միշտ մնում էին քաղ. հայրերի ուշադրութիւնից դուրս և ստանում նոյն ողորմելի 25 կամ 35 րուբլին ամսական, թէև կեանքը օր աւուր թանգանում է և ապրելու հնարաւորութիւնից զրկում նրանց։

Այդ խնդիրը դարձեալ արխիվում թաղված պիտի մնար, եթէ Աստուծոյ ողորմութեամբ լոյս չընկնէր պ. Աթարբէգեանի՝ քաղ. վարչութեան անդամի վերընտրութիւնն ու թոշակի յաւելումը։

— Կեանքը թանգացել է,— ասում էին քաղ. հայրերը.— պէտք է ռոճիկն աւելացնել։

— Ի հարկէ,— պնդում էին քաղ. վարչութեան անդամները։

Եւ ինչո՞ւ չը պիտի ապացուցէին, երբ դրանով իրանց պատառին էլ իւղ էր քըսվում։

Այդպէս էլ եղաւ։ Հետևեալ նիստերից մէկում քաղ. վարչութեան բոլոր անդամների թոշակներն աւելացան և 3600-ը դարձաւ 4800 րուբլի։

Եւ ուստի, յունվարի 30-ին, քաղ. վարչութիւնը յանձին իր անդամ պ. Աթարբէգեանի ջերմ կերպով սկսեց պաշտպանել մանր ծառայողների թոշակների յաւելումը, իսկ դուման էլ ընդունեց այդ ձայների ճնշող մեծամասնութեամբ։ Այնպէս որ, այժմ մանր ծառայողները շնորհակալ պիտի լինեն քաղ. հայրերից ոչ թէ նրա համար, որ նրանք քաղաքացիական պարտք կատարեցին, այլ շնորհակալ պիտի լինեն հանգամանքների աստուածներին, որ, ռուսական այս ընդհանուր նահանջի օրերում, նպաստաւոր կերպով դասաւորվելով Թիֆլիսի դումայում՝ լուծեցին այդ չարաբաստիկ խնդիրը։

Գոնէ այժմ այդ ծառայողները յոյս կունենան, որ երեք անգամ իւրաքանչիւր հինգ տարուց յետոյ 10%-ով թոշակները պիտի աւելանան։

Փաստը կատարված է, հրաշքն իրականացած, բայց այժմ տեսնենք որքան մըտածված է կատարվել այդ։

Քաղաք. վարչութիւնը թոշակների յաւելման խնդիրը, ինչպէս երևում է, առանց ուսումնասիրելու է զեկուցել. եթէ նա մանրամասն ուսումնասիրած լինէր, այն մեծ անարդարութիւնը այդ խնդրի մէջ չէր սպրդվի։

Ծառայողների մեծամասնութիւնն ստանում է ամսական 20, 30, 40, 50 րուբլի. ուրեմն առաջին 5 տարուց յետոյ, նրանք պիտի ստանան 22, 33, 44, 55 մի ողորմելի գումար, որ այդ խեղճերի համար մի բան չէ ներկայացնում։ Ուրեմն 5 տարի նրանք պիտի սպասեն, որ մէկը 2 րուբլի ստանայ, միւսը 3, երրորդը 4 և այլն։

Անցնենք այժմ միւս ծառայողներին, որոնք ստանում են 75, 100, 125, 150, 200 և 250 րուբլի. կը տեսնենք, որ 5 տարուց յետոյ պիտի դառնայ 82 ր. 50 կ., 110, 112 ր. 50 կ., 165 ր., 220 և 275 ր.։ Ահա տեսնում էք, որ արդէն աչք է ծակում այդ անարդարացի բաշխումը։

Մոսկվայի քաղ. ծառայողների տոկոսային յաւելումը ճիշդ հակապատկերն է ներկայացնում. ինչքան քիչ է ստանում ծառայողը, այնքան յաւելման տոկոսը մեծ է։ Նոյն սիստեմն է տիրում երկաթուղում։ Անցեալ տարի անդրկովկասեան երկաթուղում ծառայողների ռոճիկներն աւելացան հետևեալ կերպով. 25-ից սկսած ռոճիկ ստացողներինը դարձրին 40, իսկ 40-ից մինչև 50 ստացողներինը՝ 60. իսկ դէպի վերև աւելացաւ 10%, որպիսին սկսում է նուազել, որքան ռոճիկը խոշոր է։ Այլ խօսքով՝ յաւելումը մանրերին 20-ից մինչև 15%, միջիններին 15-ից մինչև 10%, իսկ բարձրերին՝ 10-ից մինչև 3%։

Այստեղ արդէն կայ սիստեմ, սկզբունք. նախ մանր ծառայողները բաւարարվում են, երկրորդ՝ ծախսի բիւջէն թւիչքներ չէ անում։

Իսկ ինչ պիտի դառնայ Թիֆլիսի քաղաքային բիւջէի դրութիւնը այդ սիստեմի շնորհիւ։

Ընտրեալները կը զգան իրանց աւելի տաքուկ, իսկ մանրերը կը մնան կրկայի գերում։

Այդ գիշեր միայն մի ձայնաւոր գտնվեց քաղաքային դումայում՝ Ց. Խունունցը, որի հայեացքների մէջ փայլում էին սկզբունքային խնդիրներ, որոնք սակայն մնացին օդի մէջ կախված։

Դա քաղաքային ծառայողների ամբողջ շտատի վերակազմութեան խնդիրն էր, որ նա առաջարկում էր և որով տանելի դրութիւն կը ստեղծվէր մանր ծառայողների համար։

Սիւլա

Պ. ՍԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» № 23-ում տպված է պ. Մարտիրոս Սարեանի նամակը Էջմիածնի տաճարի ռեստավրացիայի մասին։ Յարգելի պարոնը դատողութիւններ է անում Մոսկվայից, «Ականատեսի» տուած տեղեկութիւնների հիման վրա։

Թէև պ. Սարեանի դիտաւորութիւնը բարի և համակրելի է, սակայն պէտք է նկատեմ, որ այդ լեզուով խրատներ տալու համար տասնեակ հոգի մասնագէտներից բաղկացած խմբին և նրա գործունէութեան վրա սև քող գցելու համար բաւական չէ երեք հազար վերստ գործի տեղից հեռու լինել և ձեռքի տակ ունենալ միմիայն «Ականատեսի» տուած տեղեկութիւնները։

Պատասխանում եմ պ. Սարեանին ոչ թէ մասնաժողովի աշխատութեան սխալը նրա առաջ արդարացնելու համար, այլ նպատակս է մի անգամ ընդմիշտ միամտացնել հայ արուեստագէտին, որ իր երևակայած «ոչնչացած» կամ «կործանված» բաներ գոյութիւն չունեն։

Այժմ երկու խօսք ընթերցող հասարակութեան։

Երևակայիր, ընթերցող, մի հիւանդ գեղեցկուհի, որի վաղեմի առողջութիւնն ու գեղեցկութիւնը վերականգնելու համար բազմաթիւ մասնագէտ բժիշկներ չեն խնայում իրանց հմտութիւնն ու գիտութիւնը և տարիներ շարունակ մանրամասն ուսումնասիրելով հիւանդի ամբողջ օրգանիզմը՝ աշխատում են այնպէս անել, որ ոտի մի հատ եղունգն անգամ չը խախտելով՝ վերադարձնեն իրան թէ իր առողջութիւնը և թէ գեղեցկութիւնը։

Եւ ինչ։ Յանկարծ հեռու տեղից մի պատահական թէև բարեխիղճ բժշկից դեղատոմս է ստացվում։ Մի տարօրինակ, հասարակ ֆելդշերին անգամ յայտնի դեղատոմս, ուր հրահանգված է, թէ ինչ ձևով պէտք է գործադրել դեղերը, որպէսզի հիւանդը առողջանայ առանց խախտելու նրա գեղեցկութիւնը։

Կարծեմ այս բոլորը մի փոքր միամտութիւն է։

Գ. Բաշինջաղեան

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ ԿԱՍՍՕՅԻ ՀԱՇՒԵՏՒՈՒԹԻՒՆԸ

Լուսաւորութեան մինիստր Կասսօյի առաջին ամենահպատակ հաշւետւութիւնը չափազանց աղքատ է։

Ամենից առաջ նրանում չը կայ ոչ մի պերսպեկտիվ, ապագայի ոչ մի ծրագիր։ Մինիստրը նրանում չէ խօսում իր մօտաւոր կամ հեռաւոր ոչ մի ծրագրի մասին։

Հաշւետւութեան մէջ չեն բերված համեմատական թւեր այն մասին, թէ աշակերտների թիւը աւելացել է, պակասել, գոնէ Կասսօյի մինիստրութեան օրերին, վերջին երկու տարվայ ընթացքում։

Բացակայում է նոյնպէս մի ընդհանուր տեսութիւն ստորին, միջնակարգ և բարձր կրթարանների ժամանակակից դրութեան մասին։

Ողջ հաշւետւութիւնը ծայրայեղ շտապողական աշխատանքի տպաւորութիւն է թողնում, որը վերջը չէ պարզում, այլ աւելի շատ մթնեցնում է գործի դրութիւնը։

Բայց չոր, անկեանք նիւթերի ուսումնասիրութիւնը հասկանալի է դարձնում, թէ ինչու մինիստրը հրաժարվել է ընդհանուր տեսութիւն կազմելուց։

Հաշւետւութիւնից երևում է, որ դասատուների մեծ պակասութիւն է նկատվում նոյն իսկ միջնակարգ դպրոցներում, որտեղ առարկաների դասաւանդութիւնը տրվել է անհամապատասխան մասնագիտութիւն ունեցող դասատուների. երևում է նոյնպէս, որ անընդունակ աշակերտների տոկոսը հետզհետէ աւելանում է ամեն տեսակ դպրոցներում, ներքին քաղաքականութիւնից անկախ, և այդ հանգամանքը ցոյց է տալիս ռուսական դպրոցների վատանալը։

Այդ բանը մինիստրը չէ կարողացել խոստովանել և գերադասել է այդ հարցը լռութեան տալ։

Հաշւետւութիւնից երևում է, որ ռուսական 10 համալսարաններում եղել են 9 աստուածաբանութեան, 454 օրինաւոր, 158 էքստրա-օրդինարնի պրոֆեսորներ, 9 դոցենտ և 654 պրիվատ-դոցենտ։ Ազատ ամբիոններ եղել են 120։ Պրոֆեսորական կոչման համար պատրաստվողներ համալսարաններում եղել են 353, նոյն նպատակի համար արտասահման են ուղարկվել 26 հոգի։

Ըստ երևոյթին, մինիստրը մեծ հպարտութեամբ յայտարարում է, որ ուղղափառ ուսանողների թիւը աւելի շատ է եղել (26,574), հրէաներ՝ 3103, կաթոլիկներ՝ 2628, ըստ դասակարգերի՝ ազնուականներ՝ 12,987, մէշչաններ և արհեստաւորների որդիք՝ 8609, հոգևորականների՝ 4349։

Բարձր տեխնիկական դպրոցների մասին խօսելով, մինիստրութիւնը լռում է, թէ քանի ամբիոն է եղել պարապ։ Բայց տղայոց գիմնազիաներում դրանց թիւը հասնում է 359-ի, պրոգիմնազիայում 40-ի։

Բոլոր գիմնազիաներում և պրոգիմնազիաներում եղել է 133,997 աշակերտ. միջին թւով ամեն մի գիմնազիայում 357 աշակերտ։

Ռէալական դպրոցներում սովորողների թիւը եղել է 72,601։

Կանանց գիմնազիաների թիւը հասնում է 779-ի, պրոգիմնազիաներինը՝ 105-ի։ Դրանցում սովորողների թիւը կազմում է 24,096։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Խոշոր բարեգործութիւն

Գանձակ, 2 փետրվ.

Այսօր հոծ բազմութեան ներկայութեամբ հողին յանձնվեց Գանձակի բնակիչ Սողոմոն Առաքելեանի մարմինը։

Հանգուցեալը իր բոլոր կարողութիւնը նուիրել է բարեգործութեան։ Նա կտակել է իր անունով ուսումնարան կառուցանել աղքատ երեխաների համար։ Նուիրատուութիւնը կայանում է 8 խոշոր խանութներից, որոնք կարժենան 50,000 ր., իսկ կանխիկ դրամով և պարտամուրհակներով 20—25,000 ր.։ Վերջին գումարը պէտք է գործադրեն շինութեան համար, իսկ խանութներից ստացված տարեկան 2400 ր. ուսումնարանի ծախքերի համար։

Հանգուցեալ բարեգործ Ն. Աֆանասեանից յետոյ Գանձակում երկրորդ տեղն է բռնում ներկայ հանգուցեալը իր խոշոր բարեգործութեամբ։

Սիւնեցի

ԹԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԻՋԱԳԵՏՔ

(Թռուցիկ տպաւորութիւններ)

Կօկանդէն Բաղդադ ըրած ճամբորդութեանս եւրոպական մասը թղթակցութեան նիւթ չպիտի ընեմ։ Այդպիսի թղթակցութիւններ շատ տպուած են «Մշակի» մէջ։ Պիտի նկարագրեմ Միջագետքի ճամբորդութիւնս, որովհետև, որքան որ կը յիշեմ, տասը տարի լինելով հաւատարիմ ընթերցող «Մշակի»՝ այս կողմերէն գրուած ճամբու նօթեր չեմ կարդացած։

Ի՞նչպէս ինկայ Միջագետք։ Նապոլիէն եկանք Աղեքսանդրիա, անկէ ալ շոգենաւով Բէյրութ։ Տասը տարիէ ի վեր առաջին անգամ էր, որ ոտք կը դնէի թիւրքական հողի վրայ։ Աբդիւլ Համիդի րէժիմին թողած տպաւորութիւնը այնքան զօրաւոր էր, որ ի տես թիւրք ոստիկաններու և ֆէսաւոր ամբոխի՝ րոպէ մը սարսուռ զգացի։ Բայց ի զուր։ Մաքսատունէն անցանք, անցագիր անգամ հարցնող չկայ։ Միակ նորութիւնը, որ գտայ քաղաքին մէջ, տրամվայն էր։ Փողոցներուն մէջ իրարանցում կար, միտինգներ տեղի կունենային սիրիական արաբներու ինքնավարութեան համար։ Նոյն օրը գիշերը ճանապարհուեցանք Հալէպ, ուր հասանք յաջորդ օրը կէսօրէն վերջ։ Իջանք Baron's Hotel-ը։ Շինութիւնը գեղեցիկ և ընդարձակ է։ Երկաթուղիի պաշտօնեաներու և եւրոպացիներու ժամադրավայրը։ Հիւրանոցի տէրը և պահողները Մալումեան եղբայրներն են։ Կերևի՝ մրցակից չունին, անոր համար շատ խնամք չեն տարեր ոչ մաքրութեան և ոչ ալ սնունդին։

Հալէպ վերջին տասնամեակին մէջ բաւական առաջ գացեր է։ Քաղաքի նոր մասին մէջ քարաշէն գեղեցիկ տուներու շարքեր աւելցեր են։ Աչքի կը զարնէ մանաւանդ յայտնի վիրահատ և մեր վաղեմի բարեկամ դօքթ. Ալթունեանի գիտական ամեն կատարելութեամբ օժտուած նորակառոյց հիւանդանոցը։ Յարգելի բժիշկին հրաւէրին պատասխանելով՝ այցելեցինք իրեն. five o'clock-ով հիւրասիրեց մեզ, պտտեցանք բոլոր բաժանմունքները և հիացանք տիրող մաքրութենէն և կարգապահութենէն։ Դոքտորը ունի երկու օգնականներ — մէկը ամերիկացի, միւսը հայ — և անգլուհի հիւանդապահներ։

Իսկ հին քաղաքը իր նեղ ու աղտոտ և անկանոն փողոցներով ու բազարով մնացեր է նոյնը՝ ինչ որ էր առաջ։ Այցելեցինք հայոց առաջնորդ Ներսէս եպիսկոպոս Դանիէլեանին, որուն մասին նոյնիսկ ռուսաց հիւպատոսը գովեստով խօսեցաւ, որպէս արթուն և ժրաջան հովիւ իր հօտին։ Առաջնորդ սրբազանը հանգանակութիւն բացած էր ազգ. վարժարանը բարձրագոյն վարժարանի վերածելու համար։

Հալէպ արաբական քաղաք մըն է. հրէաներ շատ են, կան մեծ քանակութեամբ սիրիացի կաթոլիկ արաբներ. ամենէն վերջին տեղը կը բռնէ հայ տարրը, որ վերջին տարիները սկսեր է աւելնալ։ Նախկին մեծ հայ վաճառատուններն այժմ չեն մնացեր. գերմանացիք անոնց տեղը բռներ են։ Հալէպի արաբ ազգաբնակութիւնն ալ, հետևելով Բէյրութի ինքնավարութեան, պահանջներ ներկայացուցեր էր կառավարութեան։ Տարակուսելի է, որ յաջողութիւն ունենան։

Հալէպէն Բաղդադ կարելի է երկու ճամբով երթալ։ Կամ կառքով, որ 18 օր կը տևէ, և կամ Եփրատի վրայ շախթուրով (նաւակ), որ ջուրի շատ ժամանակը աւելի արագ կերթայ։ Մենք որոշեցինք գետով ճամբորդել, աւելի արագ և հանգիստ ըլլալուն համար։ Կուսակալը մեզի տուաւ «բույրուլթու» (հրամանագիր), որպէսզի ճամապարհին մեր պաշտպանութեան համար զինուոր տան և ամեն կերպ դիւրութիւն և աջակցութիւն ընծայեն մեզ տեղական վարչութիւնները։

Առաւօտուն կանուխ մեկնեցանք Հալէպէն գերմանական Բաղդադ ընկերութեան երկաթուղիով։ Երկաթուղիին միևնոյն բաժանմունքին մէջ մեզ հետ կերթար գծի այդ մասի գլխաւոր էնժէնիէօրը իր օգնականներով. բոլորն ալ ֆէս կը կրէին։ Ծանօթանալէ վերջ հարցուցի իրեն, թէ ե՞րբ պիտի վերջանայ գիծը։ «Ինշալլահ երեք տարիէն» պատասխանեց, այնուհետև սկսաւ բացատրել արգելքի զանազան քաղաքական պատճառները, որոնց շնորհիւ կը դանդաղին աշխատութիւնները, առանց յիշելու ընկերութեան դրամական նեղութիւնը, որ գըլխաւոր պատճառներէն մին է։ Կէս օրին հասանք Ջերաբոլոս, որ երկաթուղիի վերջաւորութիւնն է։ Կայարանը գետի ափէն 20 րոպէ հեռու է։ Մեր իրեղէնները սայլերուն վրայ բեռցնելով և մենք ալ անոնց ետևէն քալելով հասանք Եփրատի ափը։

Երկաթուղիիս փայտէ կամուրջը պատրաստ էր, երկաթները կը դնէին և միւս հողային աշխատութիւններն ալ կը շարունակէին։ Բանուորները տեղացի և իտալացիներ են։ Մեր նաւակ նստելու տեղին շատ մօտ՝ գերմանացիք պեղումներ կը կատարէին։ Որքան որ կարողացայ իմանալ այդտեղ հիթիթներու քաղաք մըն էր։ Հողակոյտերու տակէն դուրս բերած էին մեհեանը, պալատի սանդուղները և մի քանի մեծ քարեր, որոնց վրայ արձաններ փորագրուած կային։ Գոյքերնիս և երկու շաբաթուայ պաշարնիս տեղաւորեցինք շախթուրի մէջ։

Շախթուրը նաւակ մըն է 6 արշին երկարութեամբ, $2\frac{1}{2}$ արշին լայնութեամբ. $1\frac{1}{4}$ արշին ալ բարձրութիւն ունի։ Յատակը հաստ փայտէ շինուած է, իսկ միւս մասերը $\frac{1}{2}$ վերշօկանոց տախտակէ։ Ի տես նաւակին այդ նախնական կազմ վիճակին երկիւղը պատեց մեզ. կը մտածէինք՝ գիտակցաբար վտանգի ենթարկուիլ է այդպիսի մի նաւակով Եփրատի պէս գետի մը վրայ յորդած ատենը ճամբորդելը։ Քիչ մը տատանելէ վերջ ուրիշներուն ալ ճամբորդած ըլլալը յիշելով՝ քաջութիւննիս վերադարձաւ։ Արդարև վերջը ըսին, որ մեծ վտանգ մըն էր մէկ շախթուրով ճամբորդելը. անհրաժեշտ է ունենալ զոյգ, իրարու քով կապած, որպէսզի մէկուն փորձանք պատահելուն միւսով կարելի ըլլայ ազատիլ։

Գետի ափին՝ իր խուրջինին քով նստած էր 50—55 տարեկան նուխեցի մէշէդի մը, որ Բաղդադ կուզէր երթալ. ան խնդրեց մեզմէ զինքն ալ տանիլ մեր նաւակով. «Ա՛յ քիշի, ասանկ ճամբորդութեան մէջ մարդ Աստուծմէ ընկեր կուզէ» ըսաւ իր կովկասցիի շեշտով։ Հայրենակիցի զգացումէ դրդուած՝ սիրով ընդունեցինք զինքն ալ։

Ամբողջ շախթուրի համար վճարած էինք 12 օսմ. ոսկի. մեր ուզած քանակութեամբ ճանապարհորդ կարող էինք առնել։

Բոլորս տեղաւորուեցանք նաւակին մէջ, թւով վեց հոգի — կինս, ես, մէշէդին և երեք նաւավարներ — և ճանապարհուեցանք։ Շախթուրը նոր շինուած ըլլալուն սկսաւ ջուր առնել. մէկ կողմէն ալ ջուրը կը թափէին գետը։ Քանի մը օր վերջ այս անպատեհութիւնն ալ վերջացաւ։ Սոսկալի էր առաջին գիշերը։ Ըստ մեր պայմանի՝ նաւը տիրոջ հետ օր ու գիշեր պիտի ճամբորդէինք։ Բայց կէս գիշերուան մօտ նաւավարներս կապեցին նաւակը անծանօթ մի ափ և իրենք ալ սկսան քնանալ։ Մէշէդին էր միակ արթունը, որ յանկարծ խենթի պէս ցատկեց ափը, գերանը հանեց, և նաւակնիս սկսաւ հեռանալ։ Այս աղմուկէն արթնցանք և իմացանք պատճառը։ Մէշէդին մութի մէջ նշմարեր է գողեր, որոնք սողալով դէպի մեր նաւակը կուգան։ Քիչ մըն ալ նաւարկելէ վերջ կրկին նաւակը կապեցին ափը։ Մինչև առաւօտ արթուն հսկեցինք։ Ասոր վրայ մէշէդին և նաւավարներուն միջև տաք վէճ մը սկսաւ, որուն յաջորդեց հայհոյանք։ Միջամտութեանս վրայ հանդարտեցան։ Երկու օր նաւավարներու քմահաճոյքին հանդուրժելէ վերջ հասանք Սիւակա գիւղը։ Նաւավարները զսպելու և մեր անդորրութիւնը ապահովելու համար դիմեցի միւդիրին։ Ծալլապատիկ նստած երեկոյեան ճաշը կըներ, ընդունեց, բույրուլթուն կարդալէ վերջ «ինչ հրաման ունիք» հարցուց։ Երկու զինուոր պահանջեցի՝ տուաւ. յաջորդ առաւօտուն ինկանք ճանապարհ։ Խաղաղութիւնը տիրեց նաւուն մէջ. նաւավարներն ալ դարձան հլու հնազանդ։ Եղանակը ամբողջ ժամանակ հրաշալի էր, մանաւանդ առաւօտ և երեկոները զով. շախթուրի մէջ աթոռներու վրայ նստած՝ Եփրատի պատուական ջուրով պատրաստուած թէյերնիս կը խմէինք. այնպիսի հաճոյք կը պատճառէր մեզի, որուն նմանը երբեք չունեցանք և միշտ ալ մասնաւոր հաճոյքով պիտի վերյիշենք։ Գիշերները ցուրտ կընէր։ Լուսին չկար։ Աստուածավառ գիշերուայ այդ կանթեղը այսպիսի ճամբորդութեան մէջ ամենէն աւելի կը փնտռուի։ Հինգերորդ օրը ամպեր սկսան երևալ հորիզոնի վրայ, երթալով խտացան և կուտակուեցան մեր գլխուն։ Մօտալուտ փոթորիկը դժուար չէր գուշակել։ Կէս օրին սկսաւ ընդմիջումներով անձրևել։ Ճանապարհնիս շարունակեցինք։ Մթնելուն՝ սաստկացաւ անձրևը, և մենք ստիպուեցանք նաւակը գետի մէջտեղը ծանծաղուտ տեղ մը կապել։ Ամբողջ գիշերը անձրևեց։ Վերը ջուր, վարը ջուր. մնացեր էինք բնութեան քմահաճոյքին, որ այդ րոպէին շատ անողոք կը թուէր մեզ։ Թրջեցանք մինչև մեր ոսկորները։ Այդպէս լուսցուցինք գիշերը, որ շատ երկար երևցաւ մեզի։ Առաւօտուայ դէմ հանդարտեցաւ անձրևը. երկու ժամու չափ նաւարկելէ վերջ հասանք Դէր-զօր։ Հազիւ ոտք կոխած էինք ցամաք, տեղատարափ անձրև մը սկսաւ։ Ստիպուեցանք ափին արաբի խրճիթ մը ապաստանիլ։ Փոքրիկ խրճիթ մը, որուն մէկ մասն ալ գոմ է, իսկ միւս մասին մէջ իրենք կապրին։ Աղտոտութիւն և խեղճութիւն վերին աստիճանի։ Կմախքի նման նիհար երախաներ, որոնցմէ մէկը հիւանդ պառկած էր կրակին քով։ Անձրևը դադրելէ վերջ գոյքերնիս էշերու վրայ բեռցուցած անցանք փայտէ կամուրջէն և մտանք քաղաք։ Մեր ետևէն արաբ և հրեայ երախաներու ահագին խումբ մը կը հետևէր։ Անտանելի ցեխ էր. մեծ դժուարութեամբ հասանք Օսմանխանը ուր իջևանեցանք։

Տ. Փուլումճեան

(Կը շարունակվի)

IV Փոխադարձ ընկ. բացումը

Կարս, 31 յունվարի

Կարսը երեք փոխատու ընկերութեան բանկ ունէր, չորրորդն էլ փառաւոր հանդէսով բացվեց ամսիս 26-ին։ Նախ ռուս հոգեւորականութիւնը կարդաց աւուր պատշաճի օրհնութիւնը և յետոյ հայ հոգեւորականութիւնը։ Ներկայ էին նահանգապետը, նրա օգնականը, ոստիկանապետը, պարսից և թիւրքաց հիւպատոսները և զանազան պաշտօնական անձինք։

Ժողովուրդը քիչ էր։ Օրհնութիւնից յետոյ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որի միջոցին արտասանվեցին ճառեր և խմվեցին կենացներ։

Սրճարաններում, տրակտիրներում, տներում և քաղաքի խուլ անկիւններում խաղում են լոտո և անթոյլատրելի խաղեր։ Ցեռին սրճարանից սկսեալ մինչև քաղ. կլուբը թղթախաղութիւնը դառել է պարտաւորական պարապմունք։ Ամսիս 25-ին այդպիսի մի խուլ սրճարանում, խաղամոլները ցրվելուց յետոյ, 16 տարեկան չարագործ ծառան ուրագով ջարդում է քնած «խաղէրնի» գլուխը և փողերը առնում փախչում։ Ս. Տէր-Մելքիսեդեկեան

Ջրի հարցը լուծված

Մեծ-Ղարաքիլիսա, 31 յունվ.

Մի տարուց յետոյ գիւղը կունենայ քաղցրահամ, սառնորակ աղբիւրներ։

Այս կենսական, անչափ հասունացած հարցը վերջապէս դրականապէս լուծվեց։

Հասարակութեան հաւատարմատարը, նահանգապետի կարգադրութեան համաձայն, ստացել է Ջրանցքի ֆոնդի համար գիւղի պահեստի դրամագլխից 9739 ր.։

Ջրանցք կառուցանող մասնախումբը մեծ ոգեւորութեամբ և եռանդով սկսել է նախապատրաստական աշխատանքները։

Արդէն ստացել է նախահաշիւն և նախագիծը։ Ընդհանուր ծախսը հասնում է մօտ 18,000 ր.։ Հասարակութիւնը խոստացել է հոգալ բոլոր ծախսերը։

Մասնախումբը գումարի պակասորդը լրացնելու համար մտադիր է դիմել մասնաւոր փոխառութեան։ Մ. Ղ.

Յոբելեանական նախապատրաստութիւններ

Բագու, 29 յունվարի

Այսօր մի ուրախալի լուր լսեցի։ Շամախու թեմի հայ գիւղերի մէջ դեռ շատ վաղուց իր կուլտուրական ձգտումներով աչքի է ընկել Սաղիան գիւղը, ուր գտնվում է ս. Ստեփաննոս Նախավկայի վանքն ու մասունքը և որ բաւական թւով գիւղական-գաւառական ուսուցիչներ է տուել ինչպէս Բագու քաղաքին (մի քանի տասնեակ տարիներ առաջ), նոյնպէս թեմի շատ գիւղերին, իսկ շրջակայ գիւղացիք օրինակ են վերցրել սաղիանցիներից։

Այդ գիւղի բնիկներից մէկի՝ Մկ. Աթաբէկեանի ուսուցչութեան 40-ամեակը լրանում է առաջիկայ ապրիլ ամսին։

Աթաբէկեան 60 կամ մի քիչ աւելի հասակ ունի։ Նա ուսուցիչ է եղել Ախալքալաքում և այլ շատ տեղերում։ Պատկանում է հին սերունդին, աշխատակցել է «Մեղու Հայաստանիին» և ուրիշ շատ թերթերի զանազան ստորագրութեամբ ու անուան տակ ծածկված։ Նրա ընկերներն էին հանգ. Պետ. Սիմէօնեանին շրջապատողները, որոնցից մի մասը կենդանի է և կարող է լաւ յիշել։

Յոբելեանը տօնելու համար բացի հայրենի գիւղի յանձնաժողովից, Բագւում ընտրվել է յոբել. յանձնախումբ, որի պատուաւոր անդամներն են բժշկապետ Թ. Զաքարեան, ինժեներներ Ան. Գ. Ծատուրեան և Տիգ. Ա. Բուդաղեան, բժ. Ս. Մ. Բուդաղեան, անտառապետ-երկրաչափ Ա. Ս. Սերեբրակեան ու վաճառական Ա. Յ. Բարխուդարեան։

Չը մոռանամ ասել, որ Շամախու կոնսիստորիան 1500 ր. ռոճիկով անցեալներս Աթաբէկեանին հրաւիրեց ատենադպրի պաշտօնով, սակայն նա քաղաքի կեանքը արհամարհելով հրաժարվեց և այդ գումարի մի քառորդով համաձայնվեց գիւղերում գործել, գիւղացի մանուկներ կրթել...

Ս. Գարագաշ

Տղայոց գիմնազիա Սղնախում

Սղնախ, 1 փետրվարի

Յունվարի 27-ին կայացաւ Սղնախի քաղաքային իրաւատուների արտակարգ ժողովը, որ քննեց Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի առաջարկութիւնը Սղնախում տղայոց գիմնազիա հիմնելու մասին։ Ժողովը որոշեց՝ գիմնազիայի շինութեան համար տալ հարկաւոր հողը քաղաքից, ամեն տարի տալ գիմնազիային 200 ր. և խնդրել Սղնախի գաւառի ազնուականութեանը նիւթապէս օգնել այս գործին։

Նոյն ժողովը որոշեց՝ միջնորդել Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի առաջ, որպէսզի ուսումնարանական վարչութիւնն իր հաշւով վերանորոգէ քաղաքային այրված դպրոցի շինութիւնը այն պայմանով, որ դպրոցը այսուհետեւ ոչինչ վարձ չը տայ քաղաքին (առաջ տալիս էր 900 ր. քրէհ քաղաքին)։ Եթէ դպրոցը դուրս գայ շինութիւնից, այն ժամանակ նա դառնում է քաղաքի սեփականութիւնը։ Վերանորոգութեան համար հարկաւոր է մօտ 20,000 ռուբլի։

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի փոխարքայի կողմից առաջարկութիւն է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր նկատումները հաղորդել այն մասին, թէ արդեօք հնարաւոր չէ՞ Հիւսիսային Կովկասի մի քանի շրջաններ, օրինակ Թերեքի և Կուբանի, միացնել աւելի մօտաւոր թեմերի հետ։

◆ Ներկայումս փոխարքայի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջև բանակցութիւններ են տեղի ունեցել Ռուսաստանի հայոց թեմերի թիւը աւելացնելու հարցի մասին։

◆ Պարիզում լոյս է տեսել ֆրանսերէն՝ պրոֆէսոր Ֆ. Մակլէրի մի նոր գեղեցիկ հայագիտական երկասիրութիւնը «Հայկական մանրանկարները» վերնագրով։

◆ Բագրատ եպիսկոպոս, որ Վեհ. Կաթողիկոսի յանձնարարութեամբ եկել էր Թիֆլիս պաշտօնական գործերով, այսօր մեկնելու է Էջմիածին։ Սրբազանը իր հետ տանում է նաև Նպաստամատոյց Յանձնաժողովի բոլոր գործերը, արձանագրութիւնները և հաշիւները՝ կաթողիկոսական դիւանում պահելու համար։ Իսկ մնացորդ գումար 94,000 ր. (օբլիգացիաներով) փոխադրված է Կաթողիկոսին Թիֆլիսի առևտրական բանկի միջոցով։

◆ Բագրատ եպիսկոպոս յանձնարարութիւն ունի Վեհ. Կաթողիկոսից հրաւիրել Մն. Խոնունցին, հանգուցեալ Ալ. Ղուկասեանի կտակակատարին, ներկայացնել մանրամասն հաշիւ Ալ. Ղուկասեանի թողած ժառանգութեան և յանձնել յօգուտ ազգի կտակված գումարները։

◆ Փոխարքան Թիֆլիսի արքունական պալատի կառավարիչ Ֆ. Ա. Սմիրնովին նշանակել է պոլիտեխնիկումի կառուցման կոմիտէի անդամ։

◆ Երկուշաբթի, փետրվարի 3-ին, քաղաքային դումայի մէջ, ի թիւս այլ հարցերի, քննվեց և վարչութեան երկու անդամներ աւելացնելու հարցը։ Պէտք է ասել, որ քաղաքային ինքնավարութիւնը ամեն անգամ, երբ հարց է լինում մի որևէ նոր բան ստեղծել, մի նոր տարրական դպրոց բանալ, առարկում է միշտ, թէ դրամ չը կայ, անգին դեֆիցիտներ կան։ Սակայն երբ հարցը վերաբերում է նոր պաշտօններ ստեղծելու կամ մի քանի անձանց ռոճիկները աւելացնելու, դրամի պակասութեան առարկութիւն չէ լինում։ Թէև նոր երկու պաշտօն աւելացնելու առաջարկը դուման տապալեց 27 ձայնով ընդդէմ 26-ի, բայց նա տապալվեց շատ քիչ մեծամասնութեամբ, իսկ այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ պաշտօնի հետամուտ մարդիկ բաւական կային։ Ցաւալի երևոյթ է, որ քաղաքային ինքնավարութիւնը դեռ չէ թողել խնամիական նկատումներով գործելու յոռի սովորութիւնը։ Ուպրավայի անդամներից մինը՝ իշխան Ն. Արղութեան-Երկայնաբազուկ, նոր պաշտօն ստանալով, հեռացել է. հարկաւոր է նրա տեղ մի նոր անձն ընտրել։ Թւում է, թէ քաղաքի հայերը պէտք է ամեն կերպ աշխատէին առաջ քշել այնպիսի անձանց կանդիդատութիւնը, որոնք միանգամայն համապատասխան լինէին քաղաքային տնտեսութիւնը վարելու դժուարին կոչման թէ իրանց կրթական պատրաստութեամբ, ցենզով և թէ փորձառութեամբ, հմտութեամբ ու ջանասիրութեամբ։ Սակայն կան ձայնաւորներ, որոնք առաջ են քշում այնպիսի մի կանդիդատի, որ բնաւ չէ համապատասխանում այդ պահանջներին։

◆ Թիֆլիսի վաճառականութիւնը պոլիտեխնիկումի համար իր խոստացած 25,000 ռուբլին երէկ մուծեց պետական գանձարանը՝ գլխաւոր կոմիտէի անունով։

◆ Առաջիկայ երկուշաբթի, փետրվարի 10-ին, Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը տալու է մի հանդիսաւոր ներկայացում, որի արդիւնքը յատկացվելու է Ընկերութեան դեֆիցիտը ծածկելու համար։ Խաղալու են «Սալոմէ» և «Մակբէտ» պիէսներից մի-մի արարուած տ. Սիրանոյշի մասնակցութեամբ. լինելու է և գրական-կոնցերտային բաժին։

◆ Ինչպէս մեզ հաղորդում են, մինչև այժմ Էջմիածնի սինոդի գանձարանը մտել է յօգուտ դպրոցական ֆոնդի նուիրված գումարների միայն 100,000 ռուբլի։ Շատ տեղերից դեռ հաշիւներ չեն ուղարկվել։

◆ Ղարասուբազարից Ընձակ վարդապետը հեռագրով խնդրում է մեզ տպել հետևեալը. «Խնդրեմ տպել, որ ես ևս միանում եմ Էջմիածնի արժանաւոր միաբանների բողոքին, հայոց եկեղեցու թշնամի Ղլտճեանի ընդունման առիթով»։

◆ Յովնանեան դպրոցի կարիքաւոր աշակերտուհիներին օգնող ընկ. ներկայումս զբաղված է Թիֆլիսի շրջակայքում հողամաս ձեռք բերելու խնդրով։ Այդ հողամասի վրա սանատորիա են կառուցելու աշակերտուհիների համար։ Աղքատ աշակերտուհիների առողջութեան վրա հոգ տանելու նպատակով ընկ. վարչութիւնը որոշել է ամեն օր կարիքաւոր աշակերտուհիներին տաք նախաճաշ տալ։ Այդ համակրելի ձեռնարկին ընդառաջ գնալով, Յովնանեան դպրոցի մանկավարժական խումբը որոշել է մօտ ապագայում ընկ. օգտին, կ. Հ. Բարեգ. Ընկ. դահլիճում, ներկայացում կազմակերպել։

◆ Այսօր, ժամը 8-ին երեկոյեան, Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան դահլիճում տեղի կունենայ Բ. Իշխանեանի դասախօսութիւնը՝ «Հայ-վրացական անտագոնիզմի տնտեսական հիմքերը և սոցիալական բնոյթը» թեմայի մասին։

◆ Տուբերկուլոզի դէմ կռուող Կովկ. Ընկ. մշակում է սեփական ամառային մանկական գաղութ կազմակերպելու հարցը։ Գաղութի համար յարմար վայրեր են ճանաչված Ցխիս-Ձիրի, Կիկէտի, Ծղնէթ գիւղերը և Մանգլիս աւանը։

◆ Քաղ. վարչութեան ուսումնարանական յանձնաժողովը հաստատել է Հաւլաբարում Մելիք-Բէգլարեանների գնած հողամասի վրա կառուցվելիք օրիորդաց ուսումնարանի նախահաշիւը։ Դպրոցը ունենալու է 11 բաժանմունք։ Նախահաշիւը պահանջում է 64,000 ռուբ. ծախք։

◆ Յունվար ամսվայ ընթացքում Կ. Հ. Բար. Ընկ. ընթերցարանն են յաճախել 2379 հոգի, որից 1160-ը իգական սեռից և 1219-ը՝ արական։ Գրադարանից բաց է թողնված կարդալու համար 2294 գիրք, որից 1558-ը հայերէն և 736-ը ռուսերէն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Մոտիկ անցեալում Վրաց Գիւղատնտեսական Ընկերութիւնը Կախէթի կալուածքները ոռոգելու հարցի լուսաբանութեան համար ուղարկել էր Կախէթ մի մասնաժողով։ Այդ մասնաժողովի ներկայացրած զեկուցումից երևում է, որ Ալազան գետից հեշտութեամբ կարելի է ոռոգման ջրանցք բանալ, ուստի Ընկերութեան վարչութիւնը հաւանութիւն տալով զեկուցմանը՝ տեխնիքական գլխաւոր կոմիտէին պարտաւորեցրել է կազմել նախահաշիւ և պարզել այն պայմանները, որոնցով կարելի կը լինի իրագործված տեսնել ոռոգման ջրանցքի հարցը։

◆ Կուլտուրան սիրողների վրաց միութեանը նահանգապետը թոյլ է տուել փետր. 10-ին Վրաց թատրոնում մի երեկոյթ կազմակերպել, միութեան նիւթական միջոցները ուժեղացնելու նպատակով։

◆ Ստեփ. Տէր-Օսէփովը յայտնել է Թէլավի պրիստաւին, որ մի անյայտ ումն ուրիշ 4 աւազակների անունով իրանից պահանջել է մի որոշ գումար։ Պրիստաւը ստրաժնիկների հետ միասին ուղեւորվում է և Ալազան գետի մօտ կալանաւորում աւազակներից մէկին, տաժանակիր աշխատանքից փախած Իր. Ցիխէլաշվիլիին։

Ապա հետամուտ լինելով մնացող աւազակներին Սղնախի գաւառի Կուչատան կոչված անտառում պատահում է նրանց, ուր և բացվում է երկուստեք հրացանաձգութիւն, որի ժամանակ աւազակներից երկու հոգի սպանվում են, իսկ մէկը փախչելով ազատվում է։ Ոստիկաններից ոչ ոք վնասված չէ։ Սպանված աւազակներից մէկի անունն է Գ. Քավթարաձէ։

◆ Առաջիկայ մայիսին լրանում է վրաց անուանի բելլէտրիստ Էգնատէ Նինօշվիլիի մահվան 20-ամեակը։ Ինչպէս յայտնի է Նինօշվիլիի արձանը արդէն պատրաստ է, և կանգնեցվելու է մայիս ամսին։ Վրաց «Սոմ. խմա» լրագրում կայ սակայն մի գովելի առաջարկ ևս. այդ արձանի հետ միասին կանգնեցնել նաև մի ուրիշ արձան, հրատարակելով նրա բոլոր գրուածքների ժողովածու մատչելի գներով ժողովրդի մէջ տարածելու։ Բացի դրանից՝ կազմել Նինօշվիլիի ընդարձակ և մանրամասն կենսագրութիւնը, որպէսզի ժողովուրդը հնարաւորութիւն ունենայ ծանօթանալու նրա կեանքի նշանաւոր երևոյթների և աշխարհահայեցողութեան հետ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փետրվարի 2-ին, Մադաթեան փողոցում, Քասօյեանի տան դռնապան Սերգէյ Սմիրնովը էլեքտրաքարշի տակն ընկնելով ջարդուածքներ ստացաւ։ Միքայէլեան հիւանդանոց տանելու միջոցին վախճանվեց։

◆ Փետրվ. 2-ին, Թիֆլիսի սոր սպանդանոցի մօտ գտնվող ձորում քար հանելու ժամանակ, հողի շերտը փլվում է և տակովն անում պարսկահպատակ Գէորգ Աստուրեան Յարութիւնեանին։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։

◆ Փետրվարի 2-ին, պարսկահպատակ Թաղի Իբրահիմ օղլին վէճի բռնվելով Խանձակի գաւառի բնակիչ Գասըմ Ալիբէգ-օղլու հետ՝ դանակով վէրք հասցրեց նրան։ Յանցաւորը ձերբակալված է։ Նա խոստովանեց իր յանցանքը։

[illegible]

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական թատրոն

Վերջապէս Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը հնարաւոր գտաւ մի ինքնուրոյն նոր պիէս դնելու հայ հասարակութեան առաջ։ Այդ պիէսը Վ. Վաղարշեանի «Օժիտ» չորս գործողութեամբ դրաման էր, որ խաղացվեց փետրվարի 3-ին Արտիստական թատրոնում։

Նոյն հեղինակը անցեալ տարի գրել էր իր միւս երկու պիէսները, որոնք սակայն գեղարուեստական գործ չէին կարող համարվել, որովհետև նրանցից մէկին տենդենցն էր կլանել, իսկ միւսը զուրկ էր գեղարուեստական ճշմարտութիւնից։

Այժմ նա հանդէս է գալիս իր այս «Օժիտով», որի մէջ ժամանակակից ամուսնական կեանքի արտաքին կողմերից մէկն է շօշափում։ Պարզ է դրամայի բովանդակութիւնը։ Հարուստ բժիշկ Սադափեանի դուստրը՝ Նինան՝ ամուսնանում է աղքատ ծնողների զաւակ՝ երիտասարդ իրաւաբան Գերասիմի հետ։ Վերջինս տեղափոխվում է իր աներոջ մօտ, որի փարթամ տան մէջ նա իրան միանգամայն կեղծ դրութեան մէջ է զգում։ Ամենքը, բացի Նինայից, ակնյայտնի կերպով շեշտում ու հասկացնում են նրան, որ նա կնոջ օժիտով է ապրում, որ նա մարդ է դարձել հարուստ աներոջ փողերի շնորհիւ։ Այդ վերաբերմունքը տանջում, մաշում է Գերասիմին, իսկ սրա և Նինայի ամուսնութեան տարեդարձին տեղի է ունենում մի սկանդալ, որտեղ դեր խաղացողը լինում է Նինայի ուսանող եղբայրը։ Վերջինիս Գերասիմի դէմ լարողը մի երիտասարդ բժիշկ է, մի կարիերիստ, քծնող մարդ, որը նպատակ է դրել գժտութիւն մտցնել երիտասարդ ամուսինների մէջ, որովհետև ինքը Նինայից մերժում էր ստացել։ Ազատվելու համար կեղծ դրութիւնից, Գերասիմը ոչ միայն որոշում է թողնել Սադափեանի տունը, այլ և բաժանվել իր կնոջից, որ մի անմեղ կին է և չափազանց սիրող նոյն Գերասիմին։

Սա է պիէսի համառօտ բովանդակութիւնը։

Ինչպէս տեսնում էք, նիւթը շատ ծեծված, շաբլօն նիւթ է։ Հեղինակը շատ սահմանափակ շրջանակի մէջ էլ դրել է այն։ Իր տիպերը հեղինակը վերցրել է գլխաւորապէս բարձր բուրժուական միջավայրից։ Նիւթը մնացել է անմշակ. կարծես, հեղինակը դրամա չէ գրել, կամ չէ կարողացել մի հիւսուածք, ամբողջութիւն տալ. Նրա դրաման աւելի շուտ առանձին տեսարանների և հոգեբանական մոմենտների մի շարան է, որի շաղկապիչ օղակները կամ շատ թոյլ են կամ չափազանց արհեստական։ Դրամայում կան տիպական գծերով օժտված անձեր և գործում են նրանք, բայց նրանց գործերը կարծես անհրաժեշտութիւնից չեն բղխում, կարծես գործում են առանց մտածելու։

Ուստի և պիէսը տեսնելուց յետոյ, հանդիսատեսի համար շատ բան հարցական է մնում։ Ո՞վ էր այդ Գերասիմը, ինչ տիպի մարդ էր։ Նա, կարծես, փողի համար չէր ամուսնացել. բայց ինչո՞ւ էր բաժանվում սիրող ամուսնուց։ Վերջապէս ամենախոշոր հարցը՝ սիրո՞ւմ էր Գերասիմը Նինային՝ այդ թէև սանտիմենտալ, բայց անմեղ ու միամիտ կնոջը՝ թէ ոչ։ Այս պարագայում Գերասիմի մէջ հոգեբանական հակասութիւնը ակնյայտնի է։

Յետոյ՝ Սերեժայի, Նինայի եղբօր բռնկումը հիւրերի առաջ Գերասիմի հասցէին՝ անհասկանալի է, որովհետև չէ պատճառաբանված, ոչնչով չէ նախապատրաստված։

Կարիերիստ, քծնող բժիշկ երիտասարդ Քարհանեանը զուրկ է նրբութիւնից։ Չենք ասում, որ երիտասարդ բժիշկը այդպիսի գծեր ունենալ չէր կարող. ոչ. այդպիսի կարիերիստներ մեր ինտելիգենտների շրջանում խիստ շատ կան, բայց նրանց արտայայտվելու և գործելու ձևը միանգամայն այլ է։ Նրանց գործելու եղանակը աւելի նուրբ է և բարդ։ Վաղարշեանի բժիշկը չափազանց պրիմիտիվ ու կոպիտ է։

Եւ եթէ դրամայի մէջ կան որոշ չափով աջողված տիպեր, դրանք են՝ Սադափեանը, նրա կինը՝ Աննա Մարկօվնան, և Անուշ բաջին՝ Գերասիմի մայրը։

Մնացածների դրութիւնը խախուտ է ըստ ամենայնի և արհեստական։

Իր դրամայի հերոսներին հեղինակը վերցրել է բուրժուական միջավայրից, քիչ ծանօթ լինելով նրան։ Սակայն այդ միջավայրից գրելու, նրա հերոսների հոգեբանութեան մէջ թափանցելու համար պէտք է Սօլօլակում երկար թափառումներ անել կամ մշտապէս այնտեղ ապրել։ Թւում է, թէ Վաղարշեանի համար խորթ է այդ աշխարհը. Նրա դիտողութեան օբյէկտը, մեր կարծիքով, միջին դասակարգից կամ միջին ինտելիգենցիայից դուրս չէ կարող լինել։

Յամենայն դէպս դիտելու շնորհք ունի Վաղարշեանը, թէև նրա դիտողութեան սահմանները առ այժմ լայն չեն. ապա՝ իր գրած նախորդ դրամաներից յետոյ ներկայ գրուածքով Վաղարշեանը մի քայլ առաջ է անցել, ապացոյց՝ «Օժիտի» 3-րդ գործողութիւնը, և դա հեղինակը պլիւս պիտի համարէ իրան համար։ Չը պէտք է մոռանալ երբէք, որ գրական ձևերի մէջ ամենադժուարին և բարդ ձևը՝ դրաման է։ Այդ ասպարէզի վրա դափնիներ վաստակելը չափազանց թանգ է նստում գրողի վրա, թէ վերապրումների և թէ էներգիայի տեսակէտից...

Եւ Դրամատիկական Ընկերութիւնը չէ սխալվել, դնելով վերոյիշեալ ինքնուրոյն, գեղարուեստական պահանջի մինիմումին հազիւ բաւարարող այս պիէսը, որովհետև որչափ էլ մենք խստապահանջ լինենք, այնուամենայնիւ ցանկալի ենք համարում նոր գրողների փորձերի հետ հասարակութեանը ծանօթացնելը։

Դերակատարների մէջ աջող էին Սեւումեանը՝ Սադափեանի դերում, տ. Յասմիկը՝ Անուշ բաջու, տ. Աշխէնը, պ. Ալլահվերդեանը և մասամբ տ. Արմէնեանը (Նինայի դերում)։ Բեմադրութիւնը կաղում էր, տեղ-տեղ վնասեց, իսկ դերակատարներից մի երկուսը բոլորովին իրանց դերերում չէին։

Վաղարշեանի «Օժիտից» յետոյ խաղացին Ա. Ֆրանսի «Համր կինը» կոմեդիան, որ մի սրամիտ ստեղծագործութիւն է։ Խաղը անցաւ չափազանց աշխոյժ։ Անման էին պ. Արմէնեանն ու տ. Գուլազեանը իրանց դերերում։ Թարգմանութիւնը կատարել է Գ. Երիցեանը, որ ըստ ամենայնի աջող է, հարթ։

Սուրխաթեան

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Սև քաղաք, 26 յունվարի

Ինչպէս անցեալ անգամ գրել էի, Աբէլեանի ղեկավարութեամբ գործող դրամատիկ խումբը բացի քաղաքում ներկայացումներ տալուց մերթ ընդ մերթ ժողովրդական ներկայացումներ է կազմակերպում նաև բայոններում։

Այսպէս՝ երէկ երեկոյեան խմբի առաջին ներկայացումն էր Սև քաղաքի Ժողովրդական Տանը։ Խաղում էին «Օթելլօն»։

Պիէսի երկու գլխաւոր պատասխանատու դերերը—Եագօ և Դեզդէմօնա—կատարում էին նոր ույժեր, ինչպէս պ. Միրզոյեանը և օր. Ժասմինը։

Միրզոյեանի մասին մենք «Մշակի» մէջ յաճախ ենք առիթ ունեցել խօսելու իբրև մի բարեխիղճ և ընդունակ դերասանի։

Բարեխիղճ աշխատանքի շնորհիւ՝ նրա Եագօն, չը նայելով բոլոր աննպաստ հանգամանքներին, մի ամբողջացած տիպ դուրս եկաւ։ Ճիշդ է, պակասութիւններ շատ կային նրա խաղի մէջ, սակայն դրանք կուղղվին ժամանակի ընթացքում։ Միրզոյեանի պակասութիւններից մին ես երգելով խօսելն է։

Օր. Ժասմինին մենք այս տարի ենք միայն տեսնում դրամատիկ դերերում, և այս մի քանի ներկայացումները տեսնելով պէտք է խոստովանենք, որ օրիորդը ընդունակութիւններ է ցոյց տալիս այդ ամպլուայում։ Մանաւորապէս Դեզդէմօնայի դերում նա աջող էր։

Աբէլեանի Օթելլօյի մասին մեր շատ անգամ կրկնածների վրա հազիւ թէ հարկաւոր լինի որևէ բան աւելացնել։ Նրա խաղը գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում ամեն անգամ։

Մնացած դերակատարները տեղ-տեղ չը նայած որ թոյլ, սակայն պահպանում էին անսամբլը։

Թատրոնը կիսով չափ լիքն էր հասարակութեամբ։

Ժողովրդական Տան ներկայացումները, որքան կարելի է, պէտք է մատչելի դարձնել հասարակութեան համար, այն ինչ՝ սովորական տեղերի գները—85 կ. մինչև 12 կոպէկ—նրանք զգալի կերպով աւելացրել էին։

Վաղարշակ Թումանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 30 յունվարի

Էջմիածնի կալուածների ընդհանուր կառավարիչ Լ. Տէր-Աւետիքեանը «Մշակի» № 18-ում հրապարակով ուրանում է հերքել նոյն թերթի № 11-ում մեր երևան բերած փաստերը։

Արդ, որպէսզի ընթերցող հասարակութիւնն իրազեկ լինի հարցի էութեանն ըստ ամենայնի, ակամայ գալիս ենք կրկին շօշափելու մի անգամ արդէն շօշափված խնդիրը։

Լ. Տէր-Աւետիքեանը գուցէ օգտաշահ գործունէութիւն է ցոյց տուել ազգային ընդհանուր եկեղեցական կալուածների վերաբերմամբ. ես դրա դէմ ոչինչ չունեմ, և այդ հետաքրքրական էլ չէ։ Մեր առարկութիւնը Մարգայ կալուածներից ստացված արդիւնքների մասին է։ Մենք ի սրտէ ուրախ կը լինենք, որ եկեղեցական կալուածների բոլոր արդիւնքը հասնի ըստ պատկանելոյն. մի բան, որից շահ ունի համայն ազգութիւնը։

Լ. Տէր-Աւետիքեանն ասում է, թէ մինչև իր կառավարիչ նշանակվելը՝ Մարգա կալուածքը գանձարանին պարտ էր մնացել 700 ր., որը վճարելուց զատ՝ հասոյթը կրկնապատկեց։ Այդ խնդրում ժողովուրդը չէ մեղաւորը, այլ բարեխիղճ կառավարիչները։ Ես կապացուցեմ, որ միայն Լօրուտ ու Մարգ գիւղերը տարեկան՝ իբրև տասանորդ՝ ցորենով ու գարիով վճարել են 120-ական թաղարից աւելի (թաղարը 10 պուդ է), բացի ծխահարկի մէկ-մէկ ռուբլուց։ Վճարել են խոտերի տուրք, տասնեակ պուդերով իւղ և պանիր։ Իսկ պարոնի յիշած չորաթանի տուրքը մեզանում գոյութիւն չունի։

Տէր-Աւետիքեանը գիւղացիներին մեղադրում է անտառից փայտ կտրելու և արտահանելու մէջ։

Գիւղացիք ինչպէս կարող են անտառից փայտ կտրել և արտահանել, երբ ամեն քայլափոխում պատահող արքունի և մասնաւոր անտառապահները՝ առանց անցագրի՝ չեն թոյլ տալիս ոչ մէկին դուրս տանել պատրաստած փայտը։

Իսկ չորաթանի և մածնի մասին այստեղ խօսակցութիւն լինել չէ կարող։

Թող բացատրէ Տէր-Աւետիքեանը, թէ ո՞ր տուրքերի չափը փոխեց ու աւելացրեց, և ինչ օրէնքի հիման վրա։ Այդ առիթով հոգևոր բարձր իշխանութիւնից ստացե՞լ է հրահանգ և պաշտօնապէս յայտարարել, որպէս զի գիւղացին ճանաչել կարողանար իր վրա դրված նոր պարտքը, և որով նրա ձեռքի տակ գտնված կառավարիչները ղեկավարվէին։ Հրամայվա՞ծ է, որ իւրաքանչիւր խոզի համար 1—3 ռուբլի կերի վարձ ստանայ Ռոստոմ Թումանեանը։ Տէր-Աւետիքեանը ինքն է կարգադրել, որ եթէ գիւղացին Ռ. Թումանեանի բէկական հրամանը չը կատարէ, ենթարկվի կեղծ արձանագրութեան, կամ նրա անասունը Թումանեանների հրամանով օբեզչիկները քշեն՝ մարգեցոց Քարինջ կամ Լօրուտ գիւղերը, և վերջիններս Մարգ գիւղը, ապա իրանց հայեցողութեամբ ուզածին չափ տուգանեն և անպատիժ շարունակեն իրանց կալուածականութիւնները։ Կարգադրված եղե՞լ է, որ «Արփա Թալա» կոչված տեղի համար Թու-

Вотанъ

ЛАМПА
СЪ ГЯНУТОЙ
ПРОВОЛОЧНОЙ
НИТЬЮ
ПРОДАЕТСЯ ВСЮДУ.

ՌՈՒՍԱԿԱՆ ԱԿՑ. ԸՆԿ. „ՍԻՄԵՆՍ-ՇՈՒԿԿԵՐՏ“ Թիֆլիս, Գօլօվինսկի պր. 21.

88. 0—1

մանեանը մարցեցուց ստանայ 250 րուբլի, իսկ իր անասունները պահի մինչև արօտի վերջանալը։

Պր. Տէր-Աւետիքեա՞նն է կարգադրել, որ մարցեցին տարեկան երկու սայլ փայտ և մէկ սայլ խոտ բերի Մարցայ կալուածքից Դսեղ՝ Թումանեանի տուն ու տարվայ ընթացքում՝ հարկ եղած չափով ձրի մշակ տայ։ Բացի այդ՝ ուզածին չափով պրոտօկօլներ կազմեն և ըստ հայեցողութեան տուգանք ստանան, լինի այդ՝ ոչխարով թէ փողով։ Եւ, վերջապէս, Թումանեան եղբարց հօ չէ կարգադրված, որ գեղեցկուհիներից էլ տասանորդ ստանան…

Փառք և պատիւ հայերիս, եթէ իրօք եկեղեցական կալուածների ընդհանուր կառավարիչն այդպիսի գեղեցիկ կարգադրութիւններ է արել և թոյլ տուել հազարաւոր խեղճ ու կրակ գիւղացիների արիւն-քրտինքով ձեռք բերված վաստակը Թումանեանների գրպանը լցվի։

Ա՞յն էլ է պ. Տէր-Աւետիքեանը կարգադրել, որ Ռ. Թումանեանը սոյն յունվարին երկու անգամ Լօռու պրիստաւի միջոցով մարցեցիների հազարաւոր անասունները դուրս անի ձմերանոցներից, ջարդելով քշի, տանի Քարինջ գիւղը կամ գիշերով թողնի ճանապարհների վրա ձիւն-ձմրան, որ սովից ու ցրտից կոտորվեն, և վնասը հազարների հասնի։ Չէ՞ որ այդ ձմերանոցները գտնվում են մարցեցիների նադէլում։

Պր. Տէր-Աւետիքեանը գրում է, թէ 1870 թ. մայիսի 14-ի օրէնքով գեանհարկը ժողովրդի պարտքն է, մինչդեռ այդ թւի օրէնքով ժողովուրդը՝ ըստ կարգի՝ ինչ տեղից որ օգտվել է, դարձեալ կարող օգտվել. ոչ ոք իրաւունք չունի այդ կարգերը փոխել կամ սահմանները պակասեցնել։ Այդպէս էլ կարող են օգտվել անտառային արօտատեղերից, ինչպէս և Մարցայ կալուածքին կից արքունի անտառից։ Մնացածը գիւղացոց անասունների արօտատեղն է, և ոչ մի անտառապահ՝ համաձայն 1870 թ. 14 մայիսի օրէնքի՝ իրաւունք չունի պրոտօկօլ կազմելու։

Յետոյ՝ 1912 թ. դեկտ. 20-ի օրէնքով՝ պօսէլիան ճանաչված գիւղացիներից իրաւունք չը կայ ոչ մի հասոյթ ստանալու. մինչդեռ անցեալ 1913 թւին Ռ. Թումանեանն այդպիսիներից՝ Մարցայ անտառում խոզերն արածացնելու համար ստացել է 1300 ր.։

Եթէ, յիրաւի, պ. Տէր-Աւետիքեանը խղճմտանք ունի, ցանկանում է, որ Էջմիածինն օգտվի և ժողովուրդն էլ իր պարտականութեան սահմանները ճանաչի, ապա ուրեմն ինչու մի անգամ չի մտնում այդ հարստահարված, կեղեքված գիւղերը և ստուգում Ռ. Թումանեանի հաշիւները։ Ինչու պաշտօնապէս չի դիմում Լօռու հաշտարար դատաւորին և պահանջում պրոտօկօլների, կատարողական թերթերի և հաշտութեամբ վերջացած գործերի թիւը։ Ո՞ւր են այդ հաշիւները, ո՞րտեղ են գնում տուրքերը. Էջմիածին թէ Թումանեանների գրպանը։

Թող պ. Տէր-Աւետիքեան իր գործունէութիւնն այնպէս տանէր, որ ուրիշները նրան գովէին և ոչ թէ ինքը։ Ամառները գալիս է Դսեղ, նստում՝ առանց ժողովրդի դրութեան մէջ մտնելու։ Նա ինքնագոհ կերպով շեշտում է, թէ արդիւնքն աւելացել է իր կառավարիչ նշանակված օրից, և ձեռքը լուանում. բայց թէ ինչ ճանապարհով, ստացողը որքան է ստացել, այդ մասին լռութիւն է պահպանում։ Ժողովուրդը կը համբերէ առ այժմ։

Խաչի գիւղացի՝ Վարդան Տէր-Գրիգորեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՓԵՐԻՑ

I

Ուրմիա, 20 յունվար

Լքումի ահաւոր մղձաւանջն էր չոքել կարծես Ուրմիայի հայի հոգուն և պրկել նրա ուղեղն ու զգացումները։ Մեքենայաբար նա գնում էր իր չոր ու բթացող հաշիւների խուցը և այնտեղից երեկոյեան նոյն մեքենայական ժեստերով ու դիրքով էլի տուն վերադառնում։ Թմրած, անտարբեր, կարծես կեանքի գաղտնիքն արդէն գտել էին ու հիասթափվել, կարծես կենսական բոլոր հարցերի և երևոյթների համար ապրել պրծել էին, մնացել էր միայն մամօնայի համար ապրելը, որին և ստրկացել էին։ Իսկ նրա շուրջը, քթի տակ խմբված այնքան այլատարր ազգութիւնների ժողովուրդները «երկաթէ շերեփով» են մօտենում հսկայ պղնձին ու նրա միջոցով անսասան կացուցանում իրանց ազգային ու անհատական գոյութեան իրաւունքները։ Օտարն ի վաղուց անտի եկել այստեղ, Ուրմիայում հաստատել է իր դպրոցական պատկառելի շէնքը, նրան յարակից իր թատրոնն ու գրադարանը։ Իսկ հայերը չունեն դրանցից և ոչ մէկը, գոնէ դպրոցի սեփական շէնք ունենային։ Եթէ ժամանակին դրանցից որևէ մէկը եղել էլ է, նա էլ զոհ է գնացել տիրապետող թունաւոր անտարբերութեանն ու լքմանը։

Կրթական հաստատութիւններն ու նրանց միտքը այն աստիճան խորթացել էին Ուրմիայի հայի համար, որ չէր ցանկանում նոյն իսկ ժողովի գալ այդ մասին։ Ուսումնական տարվայ սկզբից մի քանի անգամ, նոյն իսկ առանձին հրաւէրներով ուսուցչութեան կողմից խորհրդակցութեան են հրաւիրվել ընթացիկ անհրաժեշտ հարցերի առիթով, սակայն բոլոր այդ հրաւէրները բաղխել են ապառաժ անտարբերութեան։ Աւելին կասեմ. նոյն իսկ տառերի և տպագրութեան սրբազան յոբելեանների գերագոյն պարտականութեան զգացմունքը չը բաբախեց այստեղի հայերի կրծքի տակ։ Սա արդէն շատ տխուր ու ծանր խոհեր է առաջ բերում մարդու մէջ։

Բայց ահա Ծննդեան օրը պատարագի ժամանակ՝ եկեղեցու բակում, անսպասելի կերպով վերջապէս կատարվում է «Մշակի» բերանով (1913 թ. № 248. «Յարմար առիթ է») յայտնված ցանկութիւնը, որի համար ներկայ հոգաբարձութիւնը վաղուց յարմար առիթ էր փնտռում։

Մի անսովոր ոգևորութեամբ էլեքտրականացած հասարակութիւնը՝ դպրոցական սեփական շէնք ունենալու գաղափարը իրականացնելու համար խմբվեց և այդտեղ և եթ մի արտակարգ ժողով կազմեց, որին մասնակցում էին Ուրմիայի հայութեան գիտակից և կարողաւոր տարրերը։ Երկար խօսելու և վիճաբանելու կարիք չը կար, և ոչ ոք էլ այդ չէր ցանկանում, որովհետև հարցը ամենքի համար էլ շատ հասունացած էր և պահանջն անխուսափելի. դպրոցի սեփական շէնք է պէտք։ Ով լաւ տեղեակ է Ուրմիայի հայութեան կրօնա-ազգային չափազանց խախուտ ու վտանգաւոր վիճակին, նա միայն կարող է հասկանալ և ըմբռնել, թէ ի՞նչ մեծ փրկութիւն է մանաւանդ Ուրմիայի հայի համար ունենալ դպրոցի սեփական շէնք՝ կրթական գործն ապահովելու համար։

Մի բան, որ դեռ սրանից տարիներ առաջ պիտի եղած լինէր։ Այսօր վերջապէս աջողվում է այդ. մի արտասովոր ու բարձր տրամադրութեան տակ, մէկը մէկի ետևից ստորագրեցին Ուրմիայի հայի համար մի պատկառելի գումար, մօտ 6000 րուբլի։

Ամենաշատ տուողներն եղան Մանասէրեանները, Աւագեանները, Շահգէլդեանները, որդիք և եղբարք Հայրաթեանները, եղբ. Ա. և Յ. Աֆթանդիլեանները, նաև Ա. Նազարեանը։

Ամենագրաւիչն ու գեղեցիկն այն էր, որ այդտեղ ամենի կրծքի տակ լռել էր անձնական հակառակութեան չար ոգին։ Պէտք էր տեսնել, թէ ինչ մեծ ոգևորութեամբ ման էր գալիս մի խումբ՝ հոգաբարձութեան հետ՝ տները և ստորագրել տալիս՝ ով ինչքան կարող է։ Ամենայն հաւանականութեամբ այստեղ կը հաւաքվի 8000 րուբլի։

Եթէ ի նկատի ունենանք, որ Ուրմիայի սակաւաթիւ հայերի մեծամասնութիւնը շատ չնչին գումարով է մասնակցել, տուողներն եղել են մի քանի անձնաւորութիւններ, այն ժամանակ պիտի գոհ լինենք, որ այդքան էլ հանգանակված է։ Շուտով կընտրվի մասնախումբ՝ շինութեանը ձեռնարկելու համար։ Բայց ի հարկէ 8000 րուբլով հնարաւոր չէ շինել դպրոցական այնպիսի մի շէնք, որպիսին հարկաւոր է Ուրմիայի պէս մի գաւառական քաղաքի և որպիսին պիտի բաւարարութիւն տայ, գոնէ որոշ չափով, ներկայ մանկավարժական և առողջապահական պահանջներին։

Մնում է Թիֆլիսի և այլ տեղերի բարեգործ անձանց օժանդակութիւնը խնդրել։ Իսկ Էջմիածինը, յոյս ունենք, կը նպաստէ այդպիսի ձեռնարկութեան համար։

Հ. Ժամկոչ

Յ. Գ.—Ուսուցչական խումբն ու երիտասարդների կուլտ. ընկ. վարչութիւնը միացած մի ճոխ երեկոյթ տուին յունվարի 1-ին յօգուտ դպրոցի և գրադարանի։ Չը նայելով որ թատերասրահը շատ փոքր ու անյարմար էր, բայց բաւական լաւ եկամուտ եղաւ. զուտ արդիւնք սպասվում է 200 թումանից ոչ պակաս։

Նոյն

II

Թաւրիզ, 27 յունվարի

Հայ կրթարաններից զուրկ Ուրմիա քաղաքից հասնում են մեզ աւետաբեր տեղեկութիւններ նորընտիր յաջորդ Խորէն վարդ. Լազարեանի գործունէութեան և հոգաբարձութեան ձեռք առած աշխատանքների վերաբերութեամբ, որոնք տքնում են Ուրմիայում հիմնարկել ուսումնարանական շինութիւն։

Ուրմիայում եկեղեցի չը կար. այդ եղաւ իր ժամանակին շնորհիւ Խաչիկ վարդապետի եռանդուն ջանքերի։ Յիշեալ խիստ կարևոր եղող Ուրմիայում ուսումնարան չունէին հայերը. և, շատ ցաւալի է ասել, հայ երկսեռ մանուկները մինչև այսօր էլ թափառում են հեռաստաններում կրթութիւն ստանալու մտքով կամ բարոյական սնունդ ստանալու դատապարտված են այլադաւան միսիաների դպրոցներում։

Ուսումնարանի բաց անելն ևս վիճակված է Խորէն վարդապետին։

Շատ նպաստաւոր լուրեր են հաղորդում մեզ յաջորդի մասին. Նա այցելեց հայ գիւղերը, քարոզեց, խօսեց ու ոգևորեց խեղճ գիւղացուն՝ յորդորելով պինդ կառչել մայրենի եկեղեցուն, լեզուին ու մաքուր աւանդութեանց, և միևնոյն ժամանակ բաց անելով ուսումնարաններ։

Ծննդեան տօնի առաւօտեան, պատարագից յետոյ, հայր Խորէն Լազարեան խօսեց ազդու քարոզ. բացատրեց կրթութեան նշանակութիւնը մանաւանդ այսուհետև և յորդորեց ներկայ հայ հասարակութեան հանգանակութիւն բաց անել և ապահովել ուսումնարանի շինութիւնը։ Արդարև յաջորդի խանդավառ քարոզը մեծ ազդեցութիւն գործելով ներկայ հասարակութեան վրա, եկեղեցուց յետոյ ուսումնարանի կառուցման անունով հանգանակվեց 3700 թուման մի գումար։ Հանգանակութիւնը շարունակվում է։

Նախաձեռնութեան աջողութիւնը առաւելապէս պարտական ենք սալմաստեցի վաճառականներ Յ. Շահգելդեանին, Գ. Մանասէրեանին, Խ. Աւագեանին և վաճառականական դասին, իսկ պաշտօնեաներից Ա. Միրզաջանեանի և ընկերների ջանքերը արժանի են յիշատակութեան։

Երբ Էջմիածինը Խորէն վարդ. Լազարեանին Ուրմիա գաւառին յաջորդ նշանակեց, մեր կողմից ոչ գովեստ շռայլեցինք նրա համար և ոչ անտեղի պարսաւ տեղացինք նրա գլխին, որ նա լեզուագէտ չէ և այլն. սակայն փորձերը ցոյց են տալիս, որ շատ անգամ ոչ թէ լեզուագէտներն ու գիտունները են մեզ պիտանի, այլ առաւել և առաւել նրանք, որոնք անկեղծ ու եռանդուն աշխատող են ի նպաստ ժողովրդեան։

Խորէն վ. Լազարեան իր գործունէութեամբ խոստանում է օգտակար լինել թըշուառ Ուրմիայի գաւառին։ Նա անգամ ցանկալի համակրանք է վայելում օտարազգիների շրջանում և լաւագոյն յարաբերութեան մէջ է ռուսական միսիայի ներկայացուցիչների և ռուս վարդապետի հետ։

Մենք ողջունում ենք նորընտիր յաջորդի և պատուարժան հոգաբարձութեան ազգօգուտ ջանքերը և պատրաստ ենք ուրախութեամբ հաղորդել «Մշակի» ընթերցողներին Ուրմիայի կրթական շարժման մասին պարբերաբար։

Հայկազուն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Рѣчь»-ի ասելով՝ հրաժարված Կասսոյին փոխարինելու է իշխ. Գոլիցին-Մուրավլին։

◆ «День»-ը հաղորդում է, որ մինիստրների նախկին նախագահ Կօկօվցևը, բժիշկների խորհրդով, մեկնում է արտասահման, երկու ամիս ժամանակով։

◆ Լրագիրները հաղորդում են, որ ֆինանսների նոր մինիստր Պ. Լ. Բարկը, Պետ. Դումայում հանդէս գալուց յետոյ, մեկնելու է Մոսկվա, որտեղ բորսային ժողովում ճառ է արտասանելու Մոսկվայի հասարակութեանը ուղղած։

◆ Նոր ճանապարհների յանձնաժողովը քննեց Կուբանի շրջանում կառուցվելիք ճանապարհի նախագիծը և ցանկութիւն յայտնեց, որ բաւարարութիւն տրվի ճանապարհը կառուցանող ընկերութեան։

◆ Երեքշաբթի կը կայանայ մինիստրների խորհրդի առաջին նիստը Ի. Լ. Գորեմիկինի նախագահութեամբ։ Մինիստրների խորհրդի նիստում Գորեմիկինը խորհրդի անդամներին կը ծանօթացնի իր ծրագրի նախագծի հետ։

◆ Անգլիական համայնքների պալատը 78 ձայնի մեծամասնութեամբ մերժեց պահպանողականների առաջարկը՝ արձակել պարլամենտը։

◆ Բոլգարական ժողովրդին յայտարարված է բոլոր ձախակողմեան կուսակցութիւնների (բացառութեամբ նեղ սօցիալիստական կուսակցութեան) լիդերների խորհրդակցութեան մէջ կազմված մանիֆէստը։ Մանիֆէստը քննադատում է խստորէն պետական շրջաբերականը, որ ձեռք է առել միջոցներ ընտրողական պայքարի դէմ։ Մանիֆէստը վերջանում է մի կոչով, որ չը պիտի ենթարկվել շրջաբերականին, պէտք է յարուցել դատ կառավարութեան դէմ և միահամուռ կերպով դիմադրել օրինական հողի վրա ազատ ընտրութիւնները խանգարողներին և ապահովել ժողովների ազատութիւնը։ Մանիֆէստը տրված է դէմօկրատների, ժող. պրօգրեսիստների, սօց.-դէմօկրատների, միացեալների ու հողագործների կուսակցութիւնների միութեան կողմից։

◆ Բոլգարական սօցիալիստական «Նարօդ» թերթը անուանում է զզուելի շանտաժ՝ «Կամբանի» երէկվայ հաղորդածը և պահանջում է տալ նրանց անունները, որոնք իբր թէ կաշառված են—ձախակողմեան լրագիրներ և քաղաքական գործիչներ—ռուսաց կողմից։

◆ Լօնդօնից հեռագրում են, որ Սիտիում կայացաւ «Օսմանեան ընկերակցութեան» միտինգը, որի անդամների շարքին են պատկանում մի քանի ազդեցիկ անգլիացի ռուսատեացներ, որոնց թւում են և պրօֆէսօր Բրաուն, Թոմաս Բերկլէյ և Հերալդ Կօկս։ Ճառախօսները խիստ յարձակվեցին անգլիական այն քաղաքականութեան վրա, որ վերջերս հետըզհետէ թշնամական դիրք է բռնում դէպի Թիւրքիան։ Կօկսը յայտարարեց, որ Գրէյի քաղաքականութիւնը Մեծ-Բրիտանիայի համար սխալ է, որը արդիւնք է մի շարք սխալների և եզրակացութիւնների։ Այն օրից, երբ Գրէյը դարձաւ արտաքին գործերի մինիստր, անգլիական ամբողջ քաղաքականութիւնը դարձաւ Արևելքում ծառայութիւն Ռուսաստանին, թուլացումն Թիւրքիայի նրա համար, որ Ռուսաստանը հեշտ կլանի նրան։ Այդպիսի քաղաքականութեան է հետևում Պարսկաստանի և Չինաստանի ծայրամասերի նկատմամբ։ Բերկլէյը նկարագրեց այն հսկայական ազդեցութիւնը, որ Անգլիան ունէր Արևելքում։ Նրա կարծիքով՝ այդ ազդեցութիւնը այժմ կորել է շնորհիւ ռուսաց հետ ունեցած դաշինքի։

◆ Պօլ Դէրուլէդի յուղարկաւորութեան ժամանակ Պարիզում, Լիօնի վօկզալից մինչև ս. Օգոստինոսի եկեղեցին, 100,000 հոգի յուղարկաւորում էր նրա դագաղը, իսկ 300,000 հոգի լցված էին այն փողոցներում, որոնցով անցնում էր հանգուցեալի դագաղը։

◆ Գերմանական հրէաները բողոք հրատարակեցին սիօնիստ հրէաների դէմ, որոնք յարուցել են լեզուի խնդիր։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստային գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստային գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստային գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստային գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստային գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստային գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԻԲԵԱՆ—1—2 ժ. Ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերքաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—16

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան- առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան Սեմեօնօվսկայա, № 16.
(չ.ու.կ.) 804. 100—50

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԻՐ

Չորեքշաբթի, երեկոյեան ժամը ճիշդ 8½-ին, փետրվարի 5-ին 1914 թ. Ներսիսեան դպրոցի հին շինութեան մէջ, Հայոց Գիւղատնտեսական Ընկ. դահլիճում կայանալու է Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու ծխական ընդհանուր ժողովի շարունակութիւնը։

Զբաղմունքի առարկաներն են՝
1) Հոգաբարձութեան և դպրոցի գործունէութեան տեղեկագրի ընթերցումը.
2) 1912 թ. տարեկան հաշւի քննութիւն.
3) 1913 թ. նախահաշւի » »
4) Վերաստուգող Յանձնաժողովի երեք անդամի ընտրութիւն։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու
Հոգաբարձութիւն
90. 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ“

Անեկդոտների և սրախօսութիւնների ու Մօլլա Նասրէդդինի ընտիր առակների ժողովածու։ Գրքի երեսին այս նկարը մեծ դիրքով։ Գինն է 20 կոպ.։ Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին և կազմողին՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. А. Г. Есаянцу. Գրքի գինը և ճանապարհի ծախսը 9 կոպ. մարկաներով ուղարկել առաջուց։ Գումարով ուղղողներին 100 հատը կէս գնով, այսինքն 50% զեղչ. 50 հատին 40% զեղչ. 25 հատին 30% զեղչ։ Ճանապարհածախսը գնողի վրա։ Գումարով ուղղողները պէտք է ղրկեն կանխավճար, մնացեալը վերադիր վճարով։
(օ.մ.) 29. 20—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՇՈՒԼԱՒԷՐ ԳԻՒՂԱՑԻ ԲԵԳԼԱՐ ԳԷՈՐԳԵԱՆԸ

4—5 տարի առաջ անյայտացել է և ոչ մի լուր չը կայ նրա մասին։ Խոնարհաբար խնդրվում է՝ ով որևէ տեղեկութիւն ունի՝ հաղորդէ յիշեալ գիւղի տանուտէր ԱՐՇԱԿ ԵՐԻԲԷԿԵԱՆԻՆ. Сел. Шулаверы (Тифл. губ.)
96. 1—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный